



ԱՋՈՒՄԱԶԵՆԿՈ

ԽԱՓ Շ Ի Կ Ը

ՅԳԻ ՖԻ
Գ-86

ՊԵՏՅՐԱՏ 1937
ՅԵՐԵՎԱՆ

30 MAY 2011

891.710

Ա. ԶՈՒՄԱԶԵՆԿՈ

Զ-86 48

ԽԱՓՇԻԿԸ

Ռուս. բարձր. Ի. Կ. Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ

ՊԵՏԶՐԱՏ

1937



381
37

I

Շրջագիծ կետերով

Յեթե գծենք մի կլոր գիծ և այդ գծում ղենենք յերկու կետ և մի գիծ ել գծենք տակն, այն ժամանակ ամեն մարդ ել միանգամից կհասկանա թե դա ինչ քան է:

Իսկ յեթե շրջագծի վերևն աշխատենք նկարել մի փոքրիկ խողովակ, այն ժամանակ վողջ բակի յերեխաներին պարզ կլինի, վոր այդ վողջ այլ վոր է, յեթե վողջ ինքը Բերրոուզն իր նոր գլխարկով:

Ինքը միտոր Բերրոուզը տերն է այդ տանը և այդ բակի, կարմիր կտուրով դարձի, յերկաթե ցանկապատով այգու, հայելապատ լուսամուտներով և դռան վերևը փոքրիկ զանգակով խանութի:

Այն նույն խանութի, վորի աչքի ընկնող տեղում դրված եր ստվարաթղթից պատրաստած մի փոքրիկ նեղը, կանաչագույն գգեստով, դեղին գլխարկով և ձեռքին բռնած շոկոլադեի մի մեծ տուփ:

Բեատին ել նկարեց մի կլոր գիծ, այդ գծում նա դրեց յերկու կետ: Կետերի ներքևում նա գիծ քաշեց, իսկ շրջագծի վերևն աշխատեց, նա չատ աշխատեց և դուրս բերեց բարձր խողովակ—այդ միտոր Բերրոուզի տոնական գլխարկն եր: Ածուխը սև եր, ցանկապատը դեղին, իսկ այնտեղ արևի այնքան լույս կար, վոր մարդու աչքերն իրենք իրենց փակվում էին: Դրա համար ել միտոր Բերրոուզի պատկերը նկատելի յեր

Թե՛ մոտիկից, Թե՛ հեռվից, Թե՛ բակից, Թե՛ սենյակից
և նույնիսկ փողոցի յերկաթե նախշուն դռների արան-
քից:



— Այդ միտոր Բերրոուզն է, — բղավում է յին
յերեսաները բակից:

— Այդ միտոր Բերրոուզն է, — հռհռում է յին յե-
րեսաները խանութից:

— Այդ միտոր Բերրոուզն է, — շշուկով ասաց
չոֆերի ոգնականը և բավականությունից գլխի կեպին
տարավ դեպի ծոծրակը: — Այդ միտոր Բերրոուզն է,
միայն թե նա ավելի կլոր է և ավելի ծիծաղելի ի՞նչ
գլխարկով: Յեվ ինչ խելո՞քն է այդ Բետտին: — Ի՞նչ
քաջ աղջիկ է դա: Յես չոֆերի ոգնական Դիկը չեմ
լինի, յեթե հենց այսօր նրա մորաքրոջից ընկույզի
փող չվերցնեմ նրա համար:

Այժմ իսկական Բետտի մասին

Բետտին կանգնած էր ցանկապատի մոտ և հպար-
տությամբ նայում էր իր նկարին: Նրա կարծիքը զգես-
տըն ամբողջովին մրտեղ էր ածուխից: Մրտեղ էյին
ածուխից նրա գոգնոցը, սպիտակ գուլպաները և
նույնիսկ ծամերին կապած փապավենը:

Յեվ միայն զարմանալին այն էր, վոր Բետտի
ձեռների վրա մուր չեր յերևում:

Գիտե՞ս ինչու:

Վորովհետև փոքրիկ Բետտի ձեռքերը համարյա
թե այնքան սև էյին, ինչպես իսկական ածուխը:

Իսկ մի՞թե կարող ես սևը սևի վրա նկարել:
Հապա՛ փորձիր:


Բետտի ձեռքերը սև էյին, սև էյին մազերը, սև
էյին նաև զվարթ հոնքերի տակի սև, աշխույժ աչքե-
րը:

Մի խոսքով, Բետտին նեղրուհի յեր — ինչպես,
անշուշտ, ինքդ ել գուշակեցիր:

Բետտին նեղրուհի յեր և ապրում էր Ամերիկայում,
հարավային նահանգներից մեկում, միտոր Բերրոու-
զին պատկանող տանը, այն քաղաքում, վորը պատ-
կանում է Բերրոուզի նման տասնյակ միտորների,
ինչպես այս մեկը, վոր ածուխով դեղին ցանկապատի
վրա նկարած է:

Սակայն մի՛ կարծիր, վոր Բետտին իսկապես
ապրում էր այն գեղեցիկ տանը, վորի գույնզգույն
ծաղկանոցը չըջապատված էր վանդակապատով, դռ-
ները փայլուն դռնակներ ունեյին և թափանցիկ լուսա-
մուտքները սպիտակ վարագույրներ:

Վո՛չ: Այդ տնում ապրում էր միայն փոքրիկ
Բետտի մորաքույրը, վորը մաքրում էր դռների
բռնակները և ուլալում էր միտոր Բերրոուզի համար




վարագույրները, իսկ ինքը՝ Բեռտին մօր, մեծ յեղբոր և փոքրիկ քրոջ հետ միասին, իրենց փրջիկ չուն Ստոյու և չալ կատու Կվինի հետ միասին ապրում էին քաղաքի ամենահեռու ծայրին՝ մի նեղ սենյակում, վորն ունի միայն մի փոքրիկ լուսամուտ դեպի դատարկ տարածութունը, ուր թափված էր ավազ, խճաքար, ածխի փոշի և այլն:

Բեռտի յեղբայրները հանքափորներ էին: Նրանք աշխատում էին գետնի տակը շատ խորը՝ ածխի հանքափորներում, իսկ վերջինները նույնպես պատկանում էին միտար Բերրուզին:

III

Վոսկե սրտի տեր բարի միտար Պերկինսը

Յես ասացի, վոր այն տունը, ուր ապրում է Բեռտին իր մօր, յեղբոր, քրոջ, փրջու չուն Ստոյու և



չալ կատու Կվինի հետ, նույնպես պատկանում էր միտար Բերրուզին:

Նույնպես և հանքահորերը, ուր աշխատում էին նրա յեղբայրները:

Նույնպես և այն խանութը, վորտեղից նա հաճախ գնում էր մի չիչ կաթ՝ փոքրիկ քրոջ համար և մի տուփ սուրճ՝ մօր համար:

Նրան էր պատկանում նույնպես այն ամբողջ փողոցը, վորի վրա շինված էին նույնպիսի կեղտոտ,

նեխված, ցուրտ խրճիթներ, և վերջապես նաև միստր
Բերրոուզի սեփական թուռն իր մեծ ալգով, դեղին
գարաժով, շոֆերով և հայելապատ լուսամուտներով,
ուր ապակու այն կողմը, ատամները զվարթագին
բացել եր սովորաթղթից պատրաստած նեզրը, շրջա-
պատված շոկոլադեի տուփերով և բանանի վոսկե փնջե-
րով: Բայց յեթե միստր Բերրոուզին պատկանում էյին
հանքահորերը, այդ բոլորովին չէր նշանակում, թե նա
լապտերը գոտիկից կապած, քլունդն ուսին դրած,
յերբեկիցե իջել եր այնտեղ՝ արագավազ, գլորդացող,
չաչունով աղմկող վերելակի յերկաթյա վանդակով:
Այնտեղ՝ ստորերկրյա գիշերվա մթության և հան-
դարտության մեջ:

Վոչ: Վո՛հ վոչ: Բոլորովին վոչ:

Մի՛ կարծիր նույնպես, վոր յեթե այդ ամբողջ կեղ-
տոտ փողոցն իր մութ և խոնավ տնակներով պատկա-
նում եր միստր Բերրոուզին, — մի կարծիր թե նա
յերբեկիցե իր սեփական բավականության համար
զբոսնելու յեր դուրս գալիս այդ փողոցը:

Թեկուզ հենց նրա համար, վոր տեսներ, թե ի՞նչ-
պես բոկոտն յերեխաները պղտոր և հոտած ջրով լիքը
փողոցի առվակների ջրերի մեջ թղթյա նավակներ էյին
բաց թողնում, կամ լսեր թե ինչպես յերեկոները ցե-
րեկվա աշխատանքից հոգնած տանտիկիները դռնից
մյուս դուռը ձայն էյին տալիս իրար և կամ ինչպես
պատանիներից վորեւե մեկը հենվելով պատին, մեղմիկ
նվաղում եր իր բանջոյի (նեզրական գիթառ) վրա և
քթի տակ թախծալի յերգում մի կարճ յերգ՝

Լուսի՛ն, լուսի՛ն, դուրս յեկ չուտով,
Լուսավորիր ճամբան խեղճ նեզրի,
Մութն ե իմ կյանքը, ինչպես այս փողոցը.
Մութն ե փողոցն ինչպես իմ կյանքը:



Յեւ իսկապես բարակ լուսինը դուրս լողաց ցած-
լիկ կտուրի յետեից և նրա խույսը տարածվեց խճա-
քարով և փոշով ծածկված տարածության վրա:

Դուրս լողաց: Յեւ ամբացավ: Յեւ աճեց: Յեւ
ստացավ վոսկու փայլ: Մի խոսքով, դուրս յեկավ իր
ամբողջ ուժով՝ գեթ մի փոքր ժամանակ զարգարելու
այդ կեղտոտ և աղքատիկ փողոցը:

Վո՛չ: Միստր Բերրոուզը վոչ մի ժամանակ չէր
իջել հանքահորերը և վոչ ել ման եր յեկել այդ փողո-
ցով:

Վո՛չ: Առհասարակ միայն միստր Բերրոուզի
կողմից վարձված մարդն եր յուրաքանչյուր շաբաթը
մի անգամ հերթով մոտենում այդ փողոցի վրա խրո-
նրված յուրաքանչյուր խրճիթի դռան և կոշկի ուժեղ
հարվածով ծեծում վատ ներկած դուռը:

Հե՛յ, կանչում եր նա, ալլո՛, պատրաստե՞լ եք
դուք տան վարձը:

Բետտի մայրը, վորովհետեւ ինչպես հասկանալի
յե, այդ մարդը նրա մոտ ել յեկավ, գր-նոցի փեշի
ծայրով շտապ-շտապ սրբելով ձեռքերը, բաց արեց
տան դուռի դուռը և բարեկեց:

— Բարի որ, միստր Պերկինս, ասաց նա և խոնարհ գլուխ տվեց միստր Պերկինսին: — Ներեցեք, սակայն յեթե դուք թույլ կտաք... մենք շատ կը խնդրեցինք... Այս շաբաթ մենք շատ նեղության մեջ ենք: Իմ փոքրիկը հիվանդ էր կարմրուկով և բժշկը չուզեց բժշկել նրան առանց փողի: Բացի դրանից, դուք գիտեք արդեն, վոր միստր Բերրոուզն իջեցրել է հանքափորների աշխատավարձը:



Խեղճ յերեխաներս ելի այնքան աշխատում են, բայց փող ավելի և ավելի քիչ են բերում: Յես գովարտությամբ կարողացա վճարել խանութի պարտքը, իսկ միստր Բերրոուզը պահանջում է, վոր յուրաքանչյուր հինգ ուրը մի անգամ կանոնավոր վճարենք կաթի փողը: Խոսք եմ տալիս, վոր յեկող շաբաթ յես կաշխատեմ վճարել նաև տան համար: Բարի յեղեք, հարգելի

միստր Պերկինս: Յես գիտեմ, դուք վոսկե սիրտ ունեք, միստր Պերկինս:

Յեվ նա ավելի խոնարհ գլուխ տվեց. իսկ նրա կարկատված, չթի վերնագրեստի յետի վեշերը քիչ բարձրանում եյին ամեն մի գլուխ տալուց. բոլորն էլ տեսնում եյին, վոր Բետտիի մայրը վոտքերին դուրս պաներ չունի և հնամաշ վոտնամանները հագել է մերկ վոտքերի վրա:

Բետտին այդպիսի դեսլքերում միշտ կանգնում էր իր մոր յետև և բարկացկոտ նայում էր վոսկե սիրտ ունեցող միստր Պերկինսին:

Պերկինսը կանգնած էր մնում ձեռքերը կանթած կողքերին և անհամբեր կերպով վոտքերը խփում սանդուխքի աստիճանին:

Բետտին շատ լավ տեսավ նրա փափուկ գլխարկը, կարմիր դեմքը, մաքուր սրբած կիսակոշիկները, փայլուն փակով թղթապանակը, ծիծաղելի, կլոր ակնոցները և դեղին ձեռնոցները, սակայն նրա վոսկե սիրտը չերևաց, վորքան ել վոր աշխատեց տեսնել այն նրա գույնզգույն գործած բաձկոնի տակից:

— Դուք շատ լավ գիտեք, միստրես (տիկին) Ջոնս, խոսեց վոսկե սրտի տեր բարի Պերկինսը, վոր յես այստեղ վոչինչ չեմ կարող անել: Ձեր տունը պատկանում է միստր Բերրոուզին, իսկ նա փողի շատ կարիք ունի: Դուք ինքներդ գիտեք, թե այժմ ինչ ծանր ժամանակներ են: Ձեմ կարծում, վոր միստր Բերրոուզը սպասեր մի ամբողջ շաբաթ ևս: Խորհուրդ եմ տալիս ձեզ, միստրես Ջոնս, վոր քրքրեք ձեր արկղները. և վերջան հնարավոր ե լավ քրքրեք դրանք:

Յեթե եզուց յես չստանամ այդ փողերը միստր Բերրոուզի համար, այն ժամանակ... Դուք ինքներդ գիտեք, թե ինչ կլինի հետագայում, ինչքան ել վոր այդ տխուր է հենց ինձ համար:

Յեվ, ծանր հոգոց հանելով, միստր Պերկինսը թեթև կերպով շարժեց իր փափուկ գլխարկի յեզրը,

կըր աղնոցներով համաձայնութեան նշան արեց և կրնկներ ի վրա սուր պտուղտ տալով, յետ դարձավ ու գնաց դեպի մյուս տները, վորոնք նույնպէս պատկանում էին միտոր Բերրոուզին: Նա գնաց իր թղթապանակով, ձեռնոցներով, խալտարդետ գործված բաճկոնով և իր վոսկե սրտով, վորը վոչ մի կերպ չըկարողացավ տեսնել փոքրիկ փրված Բետտին:

IV

40+2=42

Ո՛հ, ինչպե՛ս էին չխկչխկում կամողի արկղները: Ինչպիսի՛ ճոճոցով էին բացվում պահարանի դռները:

Ինչպիսի՛ աղմուկով էին սպիտակեղենները դուրս թափվում զամբյուղից ուղղակի հատակի վրա:

Յե՛վ ինչպէս եր վողբում, կոծում Բետտի մայրը՝ միտորէս Ջոնսը բոլոր անկյուններից դուրս հանած նիկելի դրամները համարելիս:

Յերկու նիկել՝ փոքրիկ յերեխայի կաթի համար, մեկը՝ հացի: Քառասուն սենտ մյուս յերեխայի կոշիկը կարկատելու համար... Դեհ՛, լավ, այդ կարելի չէ հետաձգել, թող յերեխան վազվզի բոբիկ: Յեթե միտոր Բերրոուզին հարկավոր է փող, նշանակում է վոր իսկապէս հարկավոր են: Բայց միևնույն է, այս բոլորը միայն քառասուն սենտ է: Այս միայն քառասուն սենտ է, խոմ ավելի չէ, իսկ ինձ հարկավոր է տասն անգամ շատ:

Բետտի, վո՞րտեղ է քո գանձատուփը: Չե՛, հարկավոր չէ, յես այնտեղից բոլոր փողը վերցրել եմ դեռ անցյալ շաբաթ: Գուցէ քույրդ այսօր կարողանա՞ յո՛ւլա գնալ առանց կաթի:



Լա՛վ քառասուն և յերկու... Բայց և այնպէս այդ բոլորը միայն քառասուն յերկու սենտ է, եւ ուրիշ վոչ մի դրոշ ավելի:

Բետտին մոտեցավ յերեխային: Սա իր մերկ, դարչնագույն վոտքերը վեր բարձրացրած պառկած եր սպիտակեղենի զամբյուղի մեջ:

Վերեւից ներքե թելից զամբյուղի վրա կախված եր փափուկ չալիկ – մալիկ գնդակը: Այդ չինել եր ինքը՝ Բետտին խալտարդետ փալասներից և բամբակից: Այդ գնդակը Բետտին ինքը բարձրացրել եր յերեւոյող սեղանի վրա և կախ տվել բարձր, վորպեսզի յերեխան իր սե և փայլուն, սև հուլունքի նման աչքերը բանալուն պէս իսկույն տեսներ:

Գնդակը կախված է թելից և արեւի լույսն ընկնում է նրա վրա: Գնդակը հանդարտ ճոճվում է և թվում է արեւի լույսն է շարժում այն:

Իսկ յերեխան նայում ե գնդակին և ծիծաղում: Յերեխան գեռ ատամներ չունի, բայց շուտով դուրս եյին գալու և դրա համար ել նրա շրթունքների վրա ցայաքում են թափանցիկ բշտիկները: Յայտքում են ու փայլում արևի տակ: Բշտիկներ, ճիշտ ինչպես իմ վորդու, կամ ինչպես քո յեղբոր, կամ քրոջ մոտ. մի խոսքով՝ ինչպես բոլոր աշխարհի բոլոր յերեխաների մոտ, վորոնք գեռ ևս ատամներ չունեն, վորոնց լնդերքը սաստիկ, սաստիկ քոր ե գալիս: Բետտին շատ եր նայում յերեխային, նրա վոտքերին և բշտիկներին, բազմադույն գնդակի վրա, վորին կարծես թե հրում եր արևի լույսը:

— Յես կարծում եմ — ինքնավստահ՝ կերպով հետո ասում ե Բետտին մորը, — վոր յերեխայի առողջության համար հարկավոր ե վորեւե բան անել: Նրա վոտքերը բոլորովին վտիտ են: Գուցե մենք, ինչ ել կուզի լինի, կգտնենք նրա համար կաթ, հը՞... .

Միտորիս Ջոնսն ամբողջ ուժով խփում ե ծնկներին և գլուխը շարժում:

— Բայց դու լսեցիր խոմ, — բարկացկոտ կերպով բղավում ե նա, — թե ինչ ասաց միտոր Պերկինսը: Նա ասաց, վոր այժմ ծանր ժամանակներ են և միտոր Բերրոուզը մի որ անգամ չի կարող սպասել: Մենք ի՞նչ պետք ե անենք, յեթե միտոր Բերրոուզին փողը շատ ե հարկավոր: Թող ավելի լավ ե քույրդ մնա առանց կաթի, քան թե մենք բոլորս առանց հարկի մնանք:

— Առանց հարկի՞, — զարմացավ Բետտին:

— Առանց հարկի՞, — բղավեց նորից միտորիս Ջոնսը և կրկին ձեռքերը խփեց ծնկներին: — Մի՞թե դու չես տեսել այն մարդկանց, վորոնք ապրում են ձվի արկղների և յուզի տակառների մեջ: Չե՞ս տեսել:

Բետտին հոգոց հանեց և վոչինչ չսպասախանեց:

Այլևս ի՞նչ հարցնել:

Հասկանալի յե, վոր Բետտին տեսել եր ձվի արկղներում և յուզի տակառներում ապրող մարդկանց:

Բարի միտոր Պերկինսն իր վոսկե սրտով կարողացել եր շատ ընտանիքներ դուրս հանել վոչ միայն Բերրոուզին պատկանող տներից, այլև այստեղից այլև Բետտինենց տան պատշգամբից յերևում եր արկղների, տախտակների, տակառների, ջարդված սեղանների, մահճակալների ու հնամաշ պարուսխի կտորների կույտի տակից բարձրացող բաց կապույտ ծխի սյունը:

«Կերեք թարմ ձվեր: Թարմ ձվերը գրավական ե ձեր առողջության» — սև ու մեծ տառերով արկղների վրա այգպես եր գրված, բայց արկղների մեջ վաղուց արդեն չկային վոչ ձվեր և վոչ ել նրանց տակի ծղոտը: Մեկը մյուսի վրա դրած այդ արկղները պատի ձև եյին ստացել:

Այդ պատի ծակոտիներից փչում եր քամին, անձրևը ներս եր սրսկվում, իսկ պարզ որերին արևն եր այրում:

Վերևում ձգված եր պարուսխնը և գետնի վրա այդ պարուսխների տակ և արկղների միջև վխտում են յերեխաները:

Այլուսից շինած վառարանը ծխում և փնչում եր:

Ածխի համար փող չկա, — չե՞ վոր ածխահանքերն ել պատկանում են միտոր Բերրոուզին, իսկ նրան այժմ հարկավոր եր յուրաքանչյուր կոպեկը, ուստի և վառարանը վառում եյին չոբ կաշիներով, տաշեղներով, քարածխի փոշով:

Տունը ծուխ ե և ցուրտ: Յուրտ ե և ծուխ:

Յեվ այստեղից ու Բետտինենց պատշգամբից լրսվում եր, թե ինչպես այնտեղ յերեխաները լալիս են, կանայք կուլում են և մի պառավ ել թույլ ձայնով գանդատվում եր ինչ վոր բանից: Իսկ պատանին չաբունակում եր յերգել:

Լուսին, լուսին դուրս յեկ շուտով

Լուսավորի ձամբան նեղրիս...

Ձայնը յերգում եր, իսկ բանջոն լուռ եր: Բանջոն այլևս չեր ոգնում աղիողորմ ձայնին:

Բանջոն ծախված էր հաց գնելու համար:

Ծախվել էյին նոր վերնագրեւորը, վոտնամանները, տոնական ապուրամանը՝ կապույտ ծաղիկներով: Յեւ յերգում էր պատանին միայնակ, բոլորովին մենամենակ՝ պարուսինի կտորների կույտի և արկղների արանքում:



«Այս բնակարանի նման տխուր է իմ կյանքը,»

Յեւ իմ կյանքի նման տխուր է բնակարանը...

Ո՛հ, վո՛չ: Բեռտին տեսել եր ձվի արկղների և յուղի տակառների մեջ ապրողներին:

Յեւ հոգոց էր քաշում Բեռտին ու հնազանդությամբ վերցնում քարետախտակը և գրում մոր թելադրությամբ, փութաջանորեն դուրս բերելով յուրաքանչյուր տառը:

Քառասուն սենտ, ևս յերկու սենտ, կլինի քառասուն յերկու սենտ... Միայն քառասուն յերկու, — ասում է Բեռտին և նայում իր մորը: — Իսկ հետո՞:

— Իսկ հետո՞, — հարցնում էր իր հերթին Բեռտի մայրը և ձեռքերով խփում ծնկներին: — Մի՞թե յես գիտեմ ինչ կլինի հետո, հիմա՛ր, աղջիկ... Մի՞թե յես գիտեմ...

Կրկին դեղին ցանկապատի մոտ

Կա՛նգ առ: Ի՛նչ գործ ունի այստեղ միտար Բերրոուզի նկարը և նրա լուսամուտի վրա՝ սովորաթղթե նեղրը:

Յեւ դեղին ցանկապատը:

Յեւ չոփերի ոգնականը, — չեկ Դիկը:

Այո՛: Յես կարծես թե մի քիչ շփոթվել եմ այս ամբողջ պատմության մեջ:

Յես շփոթվել եմ, ճիշտ է: Բայց լավ հասկացիր, ինձ անհրաժեշտ էր, փորպեսզի դու լավ գիտենայիր, թե ինչպես էր ապրում Բեռտին իր ընտանիքով:

Յեւ ով էր միտար Պերկինսն իր վոսկե սրտով:

Յեւ ինչո՞ւ էյին այդ մարդիկ ապրում ծածկված ձվի արկղներում և յուղի կեղտոտ տակառներում:

Բայց այժմ, յերբ դու արդեն գիտես այդ բոլորը, վերադառնանք կրկին դեպի դեղին ցանկապատը, — դեպի այն ցանկապատն, ուր քաջ Բեռտին հենց նոր էր վերջացրել միտար Բերրոուզի նկարն իր տոնական գրվարիով:

— Լա՛վ, — ասաց չոփերի կրտսեր ոգնական Դիկը և նորից գլխարկը տարավ, — սակայն այս անգամ վոչ թե ճակատից դեպի ծոծրակը, այլ ծոծրակից ուղիղ քթի վրա, վո՛րը ծածկված էր յեզիպտացորենի հատիկների նման պեպեններով:

Բեռտի, — ասաց նա: — Իսկ դու գիտե՞ս թե դրա համար ինչ կարող էն անել քեզ:

— Գիտե՛մ — պատասխանեց Բեռտին և մի անգամ ել ամխի փոքրիկ կտորով քաշեց միտար Բերրոուզի քիթը նրա նկարի վրա: Դրա համար մորաքույրս արդեն քաշել է իմ ականջները: Գիտե՛մ:

Յեւ Բեռտին բարձր ձայնով ախ քաշեց, այնքան



բարձր, վոր մինչև անգամ Դիկն ևս մի տեսակ տըխ-
րեց:

Բետտին այնուհետև սկսեց շատ յերկար ժամանակ
ախ չքաշել: Նա թափահարեց գլուխը և մտածմունքի
մեջ ընկնելով ամուսնու ձեռքը քսեց իր տափակ թիկն:



Յեվ լավ եր, վոր նրա
քիթը սև եր, այլապես
մտածում եմ, նա ինչի
կարող եր նմանվել՝ չե-
տավոր դերբի և կամ ժա-
մապահի տնակի ու կամ
այլ ինչի, վորը նույնպես
յերմիներանգ ու այդպես
չերտավոր ե:

— Համենայն դեպս բա-
րի Պերկինսը վռնդեց մեզ
բնակարանից, — ասաց Բե-
տին և մի անգամ ևս ախ
քաշեց: Յեվ այդ վերջին
անգամ: — Փոքրիկը յերեկ
ամբողջ ուրը առանց կաթի
մնաց, իսկ Զոնը այսօր
բորիկ վաղեց գալոց:

Ասա, Դիկ, դու յերբ և իցե ապրե՞լ ես ձվի արկղում:

Դիկի թի վռնեցումն պեպենները իսկույն գու-
նաւիցին և ստացան թառամած վարդի գութն, իսկ
այսերը կասկարմիր կտրեցին: Հոնքերը ստացան
բարկացկոտ տեսք և նմանվեցին յերկու բողոտ վորդի,
վորոնք վոստի վրա բաղխվում են իրար:

Յեվ Դիկի գլխարկը կրկին սկսեց նրա գլխի վրա
շարժվել այս ու այն կողմ: Առաջ ճակատից դեպի
ծոճրակը, իսկ հետո ծոճրակից դեպի ճակատը: Յեվ
վերջապես, Դիկը բարկացկոտ կերպով գլխից վերցրեց
գլխարկը և չարտեց մաքուր սալահատակած բակը,
վորն, այդ քաղաքում յեղած բոլոր բակերի նման,
պատկանում եր հարգելի Բերրոուզին:

— Ուրեմն... Նշանակում ե... Դուք պետք ե ապ-
րեք ձվի արկղում, — կակաղելով հարցրեց Դիկը և
քաշեց Բետտինի գոգնոցի ծայրից:

Այո՛, յեթե միայն կարողանանք ճարել այդպիսի
արկղներ, — պատասխանեց Բետտին: — Յես վախենում
եմ թե ուրիշ մարդիկ արդեն բոլորը զբաղեցրել են:
Իսկ յուզի տակառների մասին կարիք ել չկա մտածե-
լու: Նրանք շատ ամուր են և շատ տաք: Բացի
գրանից, նրանցից անուշ անուշ նախաճաշի հոտ ե գա-
լիս: Բետտին ամուսնով այնպես խփեց միստր Բեր-
րոուզի տոնական գլխարկին, վոր նույնիսկ կոտրեց
նրա ծայրը:

— Դիտե՛ս ինչ, ասաց նա Դիկին, — յես իսկապէս
շատ վատ աղջիկ եմ. յես այնքան ել չեմ սիրում
միստր Բերրոուզին, իսկ պատուրը կիրականորյա դրա-
քոցում ասում եր մեզ, վոր հարկավոր ե անպայման
սիրել բոլորին, այլապես կընկնես դժոխք՝ աղղակի
սատանաների ձեռքը, իսկ այնտեղ շատ չոգ ե: Ինչ
ես կարծում դու, Դիկ, իսկապես այնտեղ շատ վատ
կլինի՞:

Դիկի պեպենները, յեղիպտացորենի հատիկների
նման, նորից վռնկու գութն ստացան:

— Համենայն դեպս վատ չի լինիլ ձվի արկղների
մեջ ապրելուց, պատասխանեց նա Բետտինին: — Յեվ
հետո... Հետո... Դու չե՞ վոր գիտես դժոխք չկա և
յեթե վորեւե տեղ ապրում են սատանաներ, այդ տեղն
այնքան ել հեռու չե:

Յեվ Դիկը վերցրեց գետնին ընկած ամսի կտորը,
նայեց չորս կողմը և աչքով արեց Բետտինին: Լեզուն
դուրս գցեց և հանկարծ միստր Բերրոուզի տոնական
բարձրաձիգ գլխարկի գագաթի յերկու կողքերին նկա-
րեց յերկու հրաշալի... Հը, դու ի՞նչ ես կարծում,
ի՞նչ:

Յերկու՛ և յեղջուր: Ահա՛ թե ինչ նկարեց չոփերի
Պրաուեր ոգնական Դիկը միստր Բերրոուզի նկարի վրա:



Ածուխը սեւ էր, ցանկապատը դեղին, իսկ արեւն աշնքան պայծառ էր, վոր նրա լույսից մարդու աչքերը փակւում էին:

— Այ՛դ սատանա յե, աղաղակեցին բակի յերեսաները:

— Այ՛դ սատանա յե, աչքով արին իրար յերեսաները խանութում:

— Այ՛դ սատանա յե, վախեցած ախ քաշեց Բեռտիի մորաքույրը, վոր ապակին սրբում էր փալասով:

— Այ՛ո, այդ իսկական սատանա յե, քթի տակ փնթփնթաց անցվորը, կանգ առնելով միջանցիկ դռան մոտ:

Յեւ վնչ վոր մեկը փնչակ այնտեղ:

Յեւ ծիծաղն անցավ ամբողջ փողոցով, ինչպես իսկական քամի. ինչպես քամի, վորը տանում է իր հետ փոշին և աղբը, ու քշում էր առջևից փոշու ամպի մեջ ընկած թե տաշեղները, թե թղթի կտորները և թե ծխախոտի մնացորդները. առհասարակ այն բոլոր աղբը, վորը հանգիստում է նրան ճանապարհին:

Ստվարաթղթե նեղրը

Մինչդեռ Բեռտին և Դիկը դեղին ցանկապատի մոտ խոսում էին իրար հետ, Բերրոուզի խանութի դռան զանգակը վոչ մի բոպե չէր դադարում հնչելուց:

Դուռը բացվում ու խփվում էր անընդհատ. ստվարաթղթե նեղրը շոկոլադի տուփը ձեռքին բանի դեղին փնջերի վրա հանգարտ ճռճում էր միջանցիկ քամուց:

Քամին խփում էր նրա գունազարդված կրծքին և, բարկանալով, աշխատում էր շուռ տալ նրան մյուս կողմի վրա, սակայն նա կանգնած էր ամուր: Նա իր սպիտակ առամները բացել էր և յերբեք չէր ցանկանում ներս մտնող գնորդներին ցույց տալ, վոր իր յետևում վոչ դիսարկ կա, վոչ բաճկոնիկ, վոչ ել ծոծրակ, և վոր ինքը մի հասարակ ստվարաթղթի կտոր է և պատկանում է, ինչպես և վողջ խանութը, հարգելի Բերրոուզին:

Ձանգակը հնչում էր, դուռը չբխում, և մարդիկ մեկը մյուսի յետևից մտնում էին խանութ: Խանութի խորքում, բարձր դրակալի յետևում, խորասուզված գրքի մեջ, միտոր Պերկինսը ստուգում էր հանքափորների հաշիվները:

Ի միջի այլոց յես չդիտեմ իսկապես նրան ե՞լ էին անվանում նույնպես միտոր Պերկինս, ինչպես վոսիկ սրտով այն բարեսիրտ Պերկինսին, վորի մասին յես լեզ պատմել եմ արդեն:

Ինչ վոր մեկը, — յես այժմ չեմ հիշում ով էր, — դուցե չոֆերի ողնական չեկլիկ Դիկն էր, ասել էր ինձ, վոր դրա անունն ել միտոր Պերկինս է, մեղ ծանոթ Պերկինսի մեծ յեղբայրը, սակայն յես կարծում եմ վոր այդ այնքան ել կարևոր չե իմանալ:

Դրանց յերկուսի զլխարկն ել համենայն դեպս բոլորովին միատեսակ էին՝ միատեսակ էին նույնպես

նրանց փայլուն կիսակոշիկները. ինչպես և պսպղուն փականքներով թղթապանակները, կլոր աչքերը և կարմրագույն դեմքերը:

Գուցե և նման եյին նույն իսկ նրանց վոսկե սրտերը, վորոնց վոչ վոք չեր տեսել խայտաբղետ գործված բաձկոնների տակից:

Ավագ Մխտր Պերկինսը նստած էր, գլուխը խրած մի հաստ գրքի մեջ, իսկ նրա առաջ կանգնած էր ծեր հանքափոր Թոմաս Գրիգորին:

— Յես այսոր ձեզ բաց չեմ թողնի վոչ հաց և վոչ ել կաթ, — գիրքը խփելով ասաց Պերկինս — մեծը: Դուք ինձ պարտք եք մնացել դեռ անցյալ չարաթվա համար: Մխտր Բերրոուզը չի կարող տանել այդպիսի ուշացրած հաշիվները:

— Իսկ յես ինչ կարող եմ անել, — ասաց ծեր Թոմաս Գրիգորին, և փոշուց դեղին դուլն ստացած գլխարկը դողաց նրա ձեռքին: Դուք պետք ե խղճաք ինձ: Յես գիտեմ, դո՛ւք, մխտր Պերկինս, աղամանդի սիրտ ունեք, դուք չեք թողնի ինձ, ծերացած Թոմասին, առանց հացի: Չե՞ վոր դուք ինքներդ գիտեք, վոր յես իմ ամբողջ կյանքի ընթացքում աշխատել եմ այստեղ, այս հանքերում: Մենք հանքահորերի տիրոջ հետ հին հաշիվներ ունենք: Յեվ իմ մի շիշ կաթը յես իրավ վոր ձրի չեմ խնդրում:

Սակայն մխտր Պերկինսն իր աղամանդյա սրտով հոգոց քաշեց այնպես, ինչպես վոսկե սրտի տեր Պերկինսը:

Նա վողորկած և փայլ տված յեղունդի ծայրում քորեց սղալած մադերի բացվածքը և փայլուն կոշիկներով վոտքերը յերկարացրեց դեպի առաջ:

— Ինձ համար շատ ծանր ե, թանկագին Գրիգորի, — ասաց նա, և նրա բերանը ծովեց, չգիտես հառաչելո՞ւց, թե՞ հորանջելուց:— Բայց դուք ինքներդ հասկացեք, վոր յես այս գործում վոչինչ չեմ կարող ասել: Մխտր Բերրոուզին այս բոպեյին յուրաքանչյուր կոպեկ պետք ե: Մխտր Բերրոուզին... Յեվ

հանկարծ խոսքը կիսատ թողնելով աղամանդյա սրտով Պերկինսը լռեց:

Այ՛ո, խոսքը կիսատ՝ նա լռեց: Յեվ նրա բերանը մնաց բաց, չգիտե՛ս, հառաչելո՞ւց, հորանջելո՞ւց, թե՞ զարմանքից:



Լռեց և ծեր Թոմաս Գրիգորին:

Նրա դեղին գլխարկն ուղիղ հատակի վրա ընկավ, իսկ պինդ, կոշտացած մատերը խոզովակ կազմած բարձրացան դեպի կնճռոտ ալանջը:

— Այդ ի՞նչ է պատահել, — փսփսացին յերեխաները վաճառասեղանի յետևում:

— Այդ ի՞նչ է պատահել, — հարցրեց վերջապես ավագ միստր Պերկինսը:

— Այդ ի՞նչ է — կամացուկ ասաց նաև ծեր թոմաս Գրիգորին և քայլեց դեպի մուտքի դուռը:

Մուտքի դուռն արդեն ջարդվում էր ձեռքերի և ուսերի ճնշման տակ:

Ձանգակը կատաղորեն հնչում էր կանգ առած մի ձայնանիչի վրա:

Իսկ քամին ներս մտնող մարդկանցից առաջ անցնելով, սլանում էր դեպի խանութը, անցնում նրա խորքերը և, ուռեցնելով թշերը (բայց դու դիտես վոր քամին թշեր չունի), բոլոր ուժով խփում էր չոկոլադի տուփը ձեռքին ատելի ստվարաթղթե նեղրին: Ստվարաթղթե նեղրը կախ ընկած թելից յետ ու առաջ և վեր ու վար էր անում: Նա կտրվելով թելից չրկվելով ցած ընկավ վաճառասեղանի վրա:

Քամու հետ միասին խանութ էլին ներս մտնում նոր — ձոր մարդիկ, վորոնք բոլորովին նման չէին գնորդի:

Քամու հետ տարածվում էր նրանց աղմուկը, նրանց խինդն ու զայրացած բացականչությունները:

VII

«Ի՞նչ էք կամենում, հարգելի պարոններ»

Ի՞նչ էք կամենում, հարգելի պարոններ, — կուրծքն անվի պես դուրս քցելով, հարցրեց ավագ միստր Պերկինսը:

Կուրծքը անվի պես դուրս ցցած, գլխարկը թեք դրած գլխին, լայն մատանիներով ձեռքերը հենելով վաճառասեղանին: Ինչ քաջն է այդ ավագ միստր Պերկինսն իր աղամանդյա սրտով:

Իսկ յեթե ուշի — ուշով նայեյիր, մի քիչ ավելի ուշադրությամբ, քան այդ անում էին բոլորը, իսկույն

կտեսնեյիր, վոր այստեղ դործն այնքան էլ հասարակ չէր:

Գլխարկը թեք դրած էր գլխին — այդ ճիշտ է, բայց դրա տակ ամբողջ ճակատի վրա մանր — մանր կաթիլներով քրտինքը դուրս էր տվել:

Կուրծքը ճիշտ է, անվաճե դուրս էր ցցված, սակայն կրծքի տակ սիրտն այժի պոչի նման արագ — արագ շարժվում էր...

Իսկ ինչ վերարեբում է ծանր, վոսկե մատանիներ հագած մատներին, նույնիսկ բավականին կուրացած թոմաս Գրիգորին ևս տեսնում էր, թե ինչպես դողալով էլին նրանք և վաճառասեղանի վրա թմբուկ դարնում:

Ավագ միստր Պերկինսը վախենում էր, և այդ պարզ էր ինչպես որը. ինչպես արևոտ, տաք որը, վորը քամու և մարդկանց հետ միասին հետաքրքրությունից ներս էր նախում խանութի բացված դռնից:

— Ին՞չ էք կամենում, հարգելի պարոններ, — հարցրեց նրանց ավագ միստր Պերկինսը, վախից ատամները չիկչիկացնելով: Նարի՞նջ, չոկոլադ, բանա՞ն, պահածոնե՞ր, թե մի այլ ուրիշ բան:

Բայց ներս մտնող մարդկանց վոչ նարինջ էր հարկավոր, վոչ չոկոլադ և վոչ էլ բանան:

Բոլորից առաջ կանգնած էր Բեատիի յեղբայրը՝ Թոմ Զոնսը: Նրա կողքին Բորը՝ թոմաս Գրիգորու տղան, իսկ նրանից հետո մի շարք թոմեր, Բորեր, հանքախորներ, նրանց յեղբայրները և միստր Բերրոուզին պատկանող հանքահորերի շատ ու շատ բան — վորների վորդիները:

Մեղ — նարինջներ հարկավոր չեն, — ասաց Թոմ Զոնսը:

— Մեղ հարկավոր են ձվի արկղներ և ամենահասարակ դատարկ արկղներ, վորոնց մեջ ընտիր ձու են պահում:

— Մի ամբողջ արկղ ձու, — զարմացավ ավագ միստր Պերկինսը և գլխով նշան արավ վաճառասեղանի յետևում կանգնած յերեխային:

— Մի արկղ ձու բեր հարգելի պարոններին, լսո՞ւմ ես, Վիլիս, մի արկղ լավ, բնորովի ձվեր:

Բեատիի յեղբայր Թոմ Ջոնսը բռունցքով խփեց վաճառասեղանին:



Սև բռունցքը սեղմված էր ամուր: Ամուր սեղմված էյին և սպիտակ ատամները: Յեվ այն խոսքերը, վորոնք նա դուրս էր թողնում ատամների արանքից, նման էյին մուրճի հարվածին, յուրաքանչյուր խոսքը հատ—հատ և շեշտակի, վորոնցով նա խփում էր ավազ միստր Պերկինսի քրտնած ճակատին և վախկոտ աչքերին:

— Բավական էն ձեր կատակները: Ձեր ապրանքը մեր գրպանի համար չե—վոչ թե մի արկղ ձու, այլ ձվի արկղն ենք ուզում, մեզ և մեր յերեխաների համար տան և բնակարանի փոխարեն, գլխներիս վերև տանիք փոխարեն:

Դու մի քիչ հանդարտ խոսիր, — մրթմրթաց նա: Ձեր տունը և պատերը իմ գործը չե: Ինձ հար-

կավոր ե, վոր դուք իր ժամանակին վճարեք հացի փողը, իսկ քնել դուք կարող եք վորտեղ կուզեք... միստր Բերրուզ...

Թոմ Ջոնսը թույլ չավեց նրան վերջացնելու իր խոսքը:

— Արկղներ և միայն արկղներ են մեզ հարկավոր: Իսկ միստր Բերրուզի հետ մենք կխոսենք հետո՝ ինքներս: Իսկ դուք շտապեցեք ձվերի արկղներ տալ, ձվեր, վորոնք դուք անշուշտ արդեն կերել եք կամ դուցե կուտեք նախաճաշին:

Վաճառասեղանի յետևում կանգնած յերեխաները նայեցին մեկը մյուսին, հռհռացին, բռունցք ցույց տալով:

Սակայն Թոմ Ջոնսը նորից մի քայլ առաջ անցավ իսկ ավազ միստր Պերկինսը նորից մի քայլ յետ գնաց. իսկ յերեխաներն այլևս չծիծաղեցին և վախեցած քաշվեցին ինչ վոր անկյուն և ձվի դատարկ արկղը արդեն անցավ յերեխաների ձեռքերից Թոմի և Բորի ձեռքե-



րը, ապա Թոմերի և Բորերի ձեռքերը—հանքափորների և նրանց յեղբայրների ձեռքերը, վորոնք աշխատում են միստր Բերրուզին պատկանած հանքահորերում: Յեվ այդպես առաջին, յերկրորդ, յերրորդ և չորրորդ արկղը...

Կրկին Բեատիի մասին

Դեղին Դիկը քաշեց Բեատիի փեշից.

— Նայի՛ր այստեղ, տե՛ս, ինչ է կատարվում փողոցում, խանութի մոտ: Տեսնո՞ւմ ես արդյոք:

Խանութի մոտ ամբոխ կար: Այո՛, Բեատին այդ բոլորը լավ տեսնում էր: Ամբոխը շարժվում էր և բազմանում:

Սկզբում նա նման էր մի փոքրիկ սև լճակի, իսկ հետո այդ լճակը թափվեցին բոլոր նրբանցքներից բարակ առուններ: Լճակը մեծացավ ու դարձավ ավելի լայն, ավելի մեծ մի լիճ և դուրս եկավ հսկայական ծով դառնար, յեթե չլինեյին նրա ավերը — աները, փողոցի մայթերը, ցուցանակները և այդիների վանդակապատերը: Ավերը նույնպես ծածկված էյին մարդկանցով:

Մաղդիկ գլուխները դուրս եյին հանում լուսամուտներից, դուրս եյին վազում դռներից, սեղմվում մայթերի վրա, բարձրանում այդիների վանդակապատերի վրա, ցցվում էյին պատշգամբների վրա, վերելվում ցուցանակների կողքին:

Իսկ մի քանիսները, փորոնք ավելի դեռահասակ ու ճարպիկ էյին, խելք էյին արել բարձրանալ ուղղակի ցուցանակների վրա և գլուխները կախելով փոսկեզոծված կլոր, ծի նման փոքրիկ ծակերի մեջ, այնտեղ՝ կարծես թե փոքրիկ պատուհաններից՝ դուրս էյին նայում:

— Ինչ վոր բան է պատահել, — ասաց դեղին Դիկը: Յե՛կ մենք ել գնանք այնտեղ:

Նա ուղեց ասել «նայելու», սակայն մոտը վոչ վոք չկար, վոր ասեր:

Բեատիի կալմի՛ր զգեստն այնպիսի արագությամբ մեկ յերելում էր, մեկ կորչում նրա աչքերի առջևից, վոր կարծես թե այդ մի սովորական աղջկա վրայի հասարակ զգեստ չէր, այլ քամու բերանն ընկած խաչ-

խաչի մի մե՛ծ, մեծ կարմիր ծաղիկ: «Բեատի՛», ուղեց ձայն տալ Դիկը, բայց արդեն ուշ էր: Բեատին չատ հեռու յեր, նա անցել էր միջանցիկ դռան ցանցապատից և արդեն փողոցումն էր: Յեվ նրա կարմիր զգեստը, վորպես մի մե՛ծ, մեծ խաչխաչ, ծածանվում էր մարդկային կենդանի առվակում և լողում էր նրա հետ ավելի հեռուները, դեպի մարդկային մեծ լիճը:

IX

Այժմ Դիկի մասին

Ճիշտն ասած Դիկը մտածմունքի մեջ ընկավ: Ամենից առաջ նա մտածում էր այն մասին, թե՛ ինչ կասի գլխավոր շոֆերը, յեթե նրան չգտնի իր տեղում:

Հետո ինչ կասի գլխավոր շոֆերը միտար Բերրոուզի կառավարիչին իր կրտսեր ողնականի — Դիկի վարմունքի մասին:

Յեվ վերջապես ինչ կասի միտար Բերրոուզը և ինչ կարող է դուրս գալ դրանից հենց իրեն՝ գլխավոր շոֆերի կրտսեր ողնական Դիկի համար:

Սակայն այդ մասին յերկար մտածելու ժամանակ չկար, դրա համար ել նա միայն մի բոպե մտածեց, միայն մի ամենակարճ բոպե, դուրս և այդ բոպեյի կեսի չափ, մի խոսքով՝ միայն այնքան ժամանակ, վորպեսզի կարողանար ինքը իրեն ասել, թե «ի՞նչ կասի գլխավոր շոֆերը»:

Արտասանել այդքանը, գլխարկն ուղղել և արագ ցատկումով նետվել Բեատիի յետևից, նրա կարմիր զգեստի յետևից և մարդկային այդ աղմկոտ հեղեղատի մեջ ընկնել:

Նորից ձվի արկղների մասին

Ձվի դատարկ արկղն անցավ մի ձեռքից մյուս ձեռքը:

Վարդապետին ռանդատաչեղների վերջին խոսքից պիկները թափվեցին ներքեվ: Առկայծում էին սև տառերը: Շուռ էին գալիս սուր կողքերը: Յեվ յերբ արկղը վեր բարձրացրին, նրա վոչ լավ իրար խփված տախտակների արանքից անսպասելիորեն լուսավորվեց արևը:

Իսկ արկղը բարձրացնում էին վեր և վեր:

Տասնյակ ձեռքեր նետում էին այն զնդակի նման մեկի ձեռքից մյուսի ձեռքը:

Յեվ տասնյակ, — վո՛չ — հարյուրավոր ձայներ հանդիպելով վերև թռչող արկղին ներդաշնակորեն աղաղակում էին. —

— Ահա՛ մեր տունը, ահա՛ մեր բնակարանը, ահա ծածկը մեր յերեխաների համար:


Հարյուրավոր ձայներ կրկնում էին այդ և լռում էին կարճ ժամանակով, իսկ այդ ժամանակ բոլորը լսում էին, թե ինչ էր ասում մարդկանց բեռատի յեղբայր Թոմ Ջոնսը:

Բեռատի սեամորթ յեղբայր Թոմը կանգնել էր փողոցի մայթի անկյունաքարի վրա և ձեռքով ամուր բռնել հեռախոսային սյունը: Մի ձեռքով բռնել նրա այդ կոկիլիկ սյունը, իսկ մյուսը, առաջ յերկարացնելով, կտրում էր իր առաջի ողբ այնպես, ինչպես ճաշարաններում խոհարարները կտրտում են կաղամբը կամ միսը:

Յեվ բոլորին թվում էր, վոր կարծես թե իսկապես ողբ բաժանվում էր իրարից նրա ձեռքի տակ և նրա յուրաքանչյուր խոսքը կարծես զնդակի նման ընկնում էր ճեղքված ողբի ակոսի մեջ:

— Լսեցե՛ք, ընկերներ, — ասում էր Բեռատի յեղբայր սեամորթ Թոմ Ջոնսը: Լսեցե՛ք ինձ, յես ասում եմ ձեզ այն, ինչ վոր դուք առանց ինձ ել գիտեք: Սակայն միևնույն է, յես ցանկանում եմ հարցնել ձեզանից՝ շատ պիտի տեի՞ այս բոլորը: Դեռ մենք յերկար պիտի՞ համբերենք:

Տեսե՛ք, միտար Բերրոուզը տարեց տարի հարժատանում է: Տեսե՛ք, թե նա վորքան նոր տներ, ավտոմեքենաներ, խանութներ, վորքան շոգենավեր, յերկաթուղային վագոններ ունի: Ածուխի ինչպիսի՞ շենքեր, փողի ինչպիսի կույտեր: Իսկ այդ բոլորը ո՞վ է վաստակել նրա համար, ո՞վ. մե՛ներ:



— Մե՛նք, ձայն ավեցին հարյուրավոր մարդիկ և հարյուրավոր սև ու սպիտակ ձեռքեր պարզվեցին դեպի բեռտի յեղբայրը, դեպի սևամորթ Թոմ Ջոնսը:

Մե՛նք, — կրկնեց Թոմ Ջոնսը և կրկին ձեռքով ձեղքեց ողը: — Մենք ենք վաստակել նրա համար այդ բոլորը: Այդ մենք ենք, վոր ամեն ոք նրա համար իջնում ենք դեռնի տակ, նրա հանքահորը: Այդ մենք ենք, վոր աշխատում ենք նրա գործարաններում: Այդ մենք ենք, վոր բեռնում ենք նրա սպրանքը: Այդ մե՛նք ենք: Իսկ յեթե մենք ուշացնում ենք անկյունի արժեքի վճարը, նա մեզ դուրս է նետում փողոց, նա մեզ իրբև աղբ ավլում դուրս է թափում, դեն չպրտում վորպես ձվի կճեպ, նարինջի կլեպ: Բայց մենք այսօր ցույց կտանք բոլորին, թե մեզ եւր է վտարում միտար Բերրուզը: Այս արկղը—այդ կատակ չե, այդ խաղ չե:

— Վո՛չ, խաղ չե — պատասխանեցին դարձյալ հարյուրավոր ձայներ:



— Մենք կտանենք այդ արկղը մեր ուսերի վրա, Թող տեսնեն բոլորը...

— Թող տեսնեն բոլորը—արձագանքեցին հարյուրավոր ձայներ:

— Թող տեսնեն բոլորը, թե միտար Բերրուզն իր հանքափորների համար ինչպիսի տներ է շինում:

Յեւ վերջին խոսքի համար ողում ահոս բանալով, Թոմ Ջոնսը ներքև ցատկեց կարճասյունի վրայից:

Նրա փոխարեն այնտեղ չարձադալ Բոր Գրիգորին և գլխի վերև թափահարեց գլխարկը:

— Շարվի՛ր կարգով, — ձայն ավեց նա:

— Շարվի՛ր, — կրկնեց մեկն առաջից:

— Յե՛րգ, — հրամայեց Բոր Գրիգորին:

— Յե՛րգ, — կրկնեց մեկը յետևից:

Յեւ սկսեցին յերգել խմբովին: Յերգը աճեց, բարձրացավ և ավելի ու ավելի լայն տարածվեց: Յեւ կարծես թե յերգն իրեն արդեն նեղ եր զգում այդ փողոցում, այդ յեղրների մեջ, վոր շրջապատված էյին տներով, դռներով, ցուցանակներով և ցանկապատերով: Յերգը թռչում եր ավելի հեռուն և հեռուն, իսկ մարդկային ուղեղները ներդաշնակորեն բաղխում էյին նրան ավելի ամուր և ամուր:

Յեւ արդեն վոչ թե կլոր սև լճակի, այլ շատ յերկար դեռի նման լայն փողոցով հոսում եր մարդկային բազմությունը:

Իսկ նրանց մեջ, նրանց մթադույն կուրտիկների և սև բաճկոնների մեջ, ինչպես մի մեծ, շատ մեծ խաչ-խաչի ծաղիկ յերևում և անհետանում եր մեկի կարմիր զգեստը:

Ումն ևր:

Իհարկե, բեռտիներ:

XI

Մուկը դուրս յեկավ ծակից

Բեռտի մայրը՝ միտարիա Ջոնսը նստած մի մեծ կապոցի վրա որորում եր յերեսային:

Խափշիկը—3

Կապոցից դուրս ելին պրծել նախշուն ցնցոտիները, փափրիկ բարձի ծայրերը, պղնձե թեյամանի քիթը և փալասներից շինած տիկնիկի փափուկ վռտքերը:

Կապոցի կողքին, ուղղակի փողոցի վրա կանգնած ելին աթոռներ և ծուռ կողքերով մի պահարան:

Միտորիս Զոնսը որորում եր յերեխային և յերգում նրա համար.

Մկնիկը դուրս յեկավ բնից,
Զգո՛ւշ կաց, մկնիկ,
Մի՛ աղմկիր, մահճակալում քնած է
Մոր սիրած զավակը:
Որոր-որոր նանիկ
Իմ սիրուն զավակիկ:

Ինչպես տեսնում ես յերգը շատ հասարակ եր, գուցե և զվարթ, բայց միտորիս Զոնսի ձայնը տխուր եր, շատ տխուր:

Բեատիի մայրը յերգում եր և մտածում, վոր շուտով գիշերը վրա կհասնի, քամին կբարձրանա, յերկինքը կսևանա, կպատի թուխ ամպերով և յերեխան կվախենա այդ սև, ահուկի յերկնքից, կսառչեն նրա ձեռքերը և քիթը՝ փոքրիկ շան քիթի պես կմրսի, իսկ ինքը՝ միտորիս Զոնսն այդտեղ իր ահադին կապոցի վրա նստած կմնա փալասների, հագուստեղենի, թեյամանի և այլ առարկաների հետ միասին:

Նրա տան դռնից կողպեք եր կախված, սակայն բանալին վրձ թե իր գրպանումն եր, այլ կրտսեր միտոր Պերկինսի նախշուն ժիլետի գրպանումն եր, ճիշտ նրա վրսկե սրտի կողքին:

Միտորիս Զոնսը նստած սպասում եր ինչ վոր բանի:

«Գոնե Բեատին գար շուտով, — մտածում եր նա: Վատ աղջիկ, յերեւի մոռացել է, վոր յես սպասում եմ իրեն: Հետաքրքրական է իմանալ, թե ի՞նչ կասի նրա մորաքույրը: Չե՞ վոր դուր տեղը չէ, վոր նա ապրում է Բերրոուզի տանը և ոսլայում նրա վարադուլները:

Իսկապես, նա կարող է մեզ պաշտպան հանդիսանալ: Նա կխնդրի միտոր Բերրոուզին: Միտոր Բերրոուզը կասե միտոր Պերկինսին, իսկ միտոր Պերկինսը մեր բնակարանի բանալին կտա Բեատին և ամեն ինչ շատ լավ կլինի: Ա՛խ, միայն թե շուտ լինեք, այլապես յես իսկապես վռտքերը արդեն բոլորովին եմ սառել, յերեխաներն ել շուտով պիտի ընթրեն, իսկ յես չգլխեմ ի՞նչպես կարելի յե ընթրել, փողոցի ուղիղ մեջ տեղը, կապոցի վրա նստած»:

Այսպես եր մտածում միտորիս Զոնսը: Մտածում ու անընդհատ նայում եր իր առջև, վորպեսզի վորքան հնարավոր է շուտով տեսնի Բեատին նվիրական բանալին հետը:

Միտորիս Զոնսը նայում եր ու մտածում, իսկ յերեխան յերկնքին դարձած նայում եր ամպերին:

Շատ եմ ավստում, վոր չեմ կարողանում պատմել քեզ, թե իսկապես ինչ եր մտածում յերեխան, համենայն դեպս նա չեր հիշում վոչ բանալին, վոչ Պերկինսին, վոչ մոր արտասուքները, վոչ Բեատիի ճիշն ու աղաղակը, վոչ ել առավոտվա աղմուկը, յերբ ոտար մարդիկ դուրս ելին շարտում միտորիս Զոնսի տնից նրա կաղլիկ աթոռներն ու ծռակող պահարանը:

Վո՛չ: Յերեխան անշուշտ մտածում էր այն մասին, թե լավ կլինեք վոր ձեռքերով կարողանար բռնել այն սպիտակ ու փափուկ բանը, վորը լողում եր նրա գլխի վերեւ և, յեթե հնարավոր է այդ կոխեր բերանը:

Այդպիսի սպիտակ բանը յերեւի քաղցր է: Այդ շաքար է՝ այդ այն է, վոր յերբեմն դնում են բերանը ծծելու և դրանից բերանը քաղցրանում է:

Յեւ հանկարծ (և ինչո՞ւ այդ մշտապես հանկարծ է պատահում) միտորիս Զոնսը կապոցի վրա նստած սարսեց:

Յերգը թռավ փողոց, այնպես, ինչպես մեղուններն են թռչում դեպի իրենց փեթակը: Այդ յերգը նախ

սկսվեց հարեան նրբանցքում, սակայն քամին չուռ տվեց նրա թևերը: Յերգը բարձրացավ, թռավ անցավ կտուրներով և խփեց միստրիա Ջոնսի և նրա փոքրիկի աղանջներին:



Յերեխան ծիծաղեց և յերկարեց թաթիկները: Միստրիա Ջոնսը ցնցվեց ու վախեցավ: Նա այդ փողոցում յերգ չէր լսել և այն ել այդ պիսի յերգ:

XII

«Իմ փոքրիկը, իմ փոքրիկը»

Բայց ամենից շատ միստրիա Ջոնսին վախեցրեց այն, վոր բոլորի ձայնի միջից լավ ձանաչեց յուր մեծ վորդու՝ Թոմի ձայնը:

Այո՛, դա Թոմն է. այդ նրա ձայնն է, վոր յերգում է իմբի առաջին: Յեվ հարյուրավոր մարդիկ պատաս

խանում էյին նրան, Թոմ Ջոնսին, գանդուրավոր թխամորթ վորդուն:

Մենք բարձրացնում ենք... Մենք բարձրացնում ենք... — յերգում էր Թոմը:

Ապստամբության դրոշը մեր գլխի վերե... — միահամուռ պատասխանում էյին ձայները:

Մենք դուրս ենք գալիս, մենք դուրս ենք գալիս... — կրկին յերգեց Թոմը միայնակ:

Միահամուռ մենք դուրս ենք գալիս կովի... — նորից կրկնեցին ուրիշները և նրանց կոչիկները կրնկնեցին դոփյունը փողոցի սալահատակին ավելի և ավելի մոտիկից եր լսվում:

Մենք դուրս ենք գալիս... Մենք դուրս ենք գալիս...

Միահամուռ մենք դուրս ենք գալիս կովի... — Լսվում էյին յերգի հնչյունները և փողոցը խուլ ձայնով արձագանքում էր նրան: Արձագանքը գնդակի նման եր ցատկում տներից և պատերից: Ո... Ո... Ո'յ... Ո'յ...

Միստրիա Ջոնսը ձեռքը դրեց կրծքին ու շուշջը պահեց:

«Ա՛խ, այդ Թոմը, այդ Թոմը, — մտածում եր նա: — Իսկ ի՞նչ կլինի, յեթե այդ յերգն այնպիսի յերգ է, վոր չի դուր գա միստր Բերրոուզին: Չե՞ վոր Թոմը նեգր է: Ի՞նչպես նա մոռանում է այդ: Մի՞թե նեգրին իրավունք ունեն այնպիսի խոսքեր ասելու»:

Յեվ միստրիա Ջոնսը ձեռքն ավելի ամուր խփեց կրծքին: Այդ կրծքի տակ, ճիշտ է, չկար միստր Պերկինսի աղամանդյա և վոսկե սրտի նման սիրտը, բայց այն սիրտը, վորը բաբախում էր այդ կրծքի տակ, կայտառ եր, կարմիր, լիքը արյունով և խփում եր արագ-արագ և արագ:

«Ա՛խ իմ հիմար, հիմար զավակս», — կրկնեց վախեցած միստրիա Ջոնսը և յերկարացրեց պարանոցը, վորպեսզի ավելի լավ լսի յերգը:

Իսկ յերեխան դեռ վռնչից չեր վախենում: Նա թափ եր տալիս գլուխը, լսում եր յերգը ու ծիծաղում, վորովհետև այդ յերգն այնքան բարձր եր, և այնքան շատ ձայներ կային, և բացի դրանից նրանք բոլորե առ բոլորե մոտենում ու մոտենում էյին...

XIII

Վո՛չ, թող անկողնում քնի մամայի բալիկը

Յեվ ահա նրանք դուրս յեկան անկյունից՝ — Թոմ Զոնսը և Բոր Գրիգորին և ելի մի Թոմ, և ելի մի Բոր և ելի Թոմեր ու Բորեր—հանձափորներ, նրանց յեղբայրները և վորդիները, վորոնք աշխատում էյին միստըր Բերրոուզին պատկանած հանձափորներում:

Յեվ այդ վոչ թե մարդկային մի գետակ եր, այլ իսկապես մի հսկայական գետ: Յեվ վորքա՞ն մարդիկ էյին ալեկացել նրան ճանապարհին:

— Թո՛մ, բալիկս, — կանչեց միստրիս Զոնսն իր կապոցի վրայից, բարձրացնելով փոքրիկ յերեխային — Թո՛մ, բալիկս:

— Յես եմ, մայրի՛կ, արձագանքեց նրան Թոմը և դարձավ դեպի իր ընկերները:

— Մենք այստեղ ենք, մա՛յրիկ, — Թոմից հետո միաձայն դռնիցին նրա ընկերները, չարժեքով իրենց գլխարկները, իսկ միստրիս Զոնսը ևս ուրբովեց իր կապոցի վրա:

Այդքա՞ն զավակներ: Բայց վորտեղի՞ց ևն նրանք այդքան զավակներ: Յեվ ինչո՞ւ այդ փայլուն աչքերով սպիտակ մարդիկ մայրիկ են ասում նրան՝ այդ ծեր և հիվանդ նեգրուհուն:

— Մենք այստեղ ենք, մի անգամ ևս դռնիցին նրա նոր զավակները և միստրիս Զոնսի պարզ, կարմիր, արյունով լիք սիրտը ցնցվեց ինչ վոր մի ուրիշ կերպ:

— Մայրի՛կ:

— Մայրի՛կ, — ձայն տվեց նրան Թոմը: — Մի՛

վախենար, մայրի՛կ, դու այսօր կքնես քո տան հարկի տակ: Ձվի արկղները թող մնան ձվեր լցնելու համար: Մենք ինքներս այսօր կբանանք դռները նրանց առաջ, վորոնց առաջ դրանք փակել են միստր Բերրոուզի կողմից: Ճի՛շտ ե, տղերք:

— Ճի՛շտ ե, Թոմ — պատասխանեցին միստրիս Զոնսի հարյուրավոր նոր զավակները:

Այսօր նրանք բոլորն ել կլինեն իրենց հարկի տակ. բոլո՛րը, հենց այսօ՛ր, իրենց հարկի՛ տակ:

XIV

«Վարճող ես, պարտավոր ես»

Յերբ հարցնեյինք միստրիս Զոնսին, թե ինչպես պատահեց այդ բոլորը, յես հալատացած եմ, վոր նա չպիտի կարողանար պատմել խելացի մի բան:

Նա հիշում եր միայն յերգը, միայն յուր նոր վորդիների ուրախ աղմուկը, վայր ընկած կողպեքի թխկոցը և կրնկի վրա բացվող դռան ճռուցը:

Նա կկարողանար միայն յերազի պես հիշել, թե ինչպես տասնյակ ձեռքեր խտեցին նրա խղձուկ իրերը, թե ինչպես կաղ աթոռները նորից դրվեցին իրենց տեղերը, թե ինչպես ծռակողք պահարանը դարձյալ կպավ իր հարազատ անկյունին, թե ինչպես դարձյալ հատակի վրա, իսկական փայտե հատակի վրա փռվեց յուր գզգզված մեծ կապոցը և ինչպես յերեխան, նորից հայտնվելով իր տեղում, զամբյուղի մեջ իր դարչնագույն վոտքերով քացի — քացի յեր տալիս:

Սակայն այդ բոլորը կարգին բացատրել, անշուշտ, յերբեք չպիտի կարողանար միստրիս Զոնսը:

Յեթե ուղիղն ասենք, միստրիս Զոնսը նույն իսկ Համաձայնվեց միանգամից ներս մտնել իր տունը:

— Ի՞նչ եք անում դուք, ինչ եք անում, ասում եր նա: Ի՞նչ եք անում դուք, տղերք: Ձե՞ վոր միստր

Պերկինսն, անշուշտ, թույլ չպիտի տար այդ: Չե՞ վոր միտար Պերկինսն ինքն եր փակել այդ դուռը կողպեքով: Մի՞թե յես կարող եմ չհնազանդել միտար Պերկինսին:

— Կարո՞ղ ես, պարտավո՞ր ես, — արձագանքում էյին նրան հարյուրավոր ձայներ և հարյուրավոր ձեռքեր իրենց գլխարկները վեր էյին նետում այդ ծերացած, հիվանդ նեղրուհու առաջ:

Յեւ միտարիս Ջոնսը կարծես թե յերազի մեջ գգում եր, թե ինչպես ինչ վոր ձեռքեր բռնեցին նրա հագուստից և թեթև կերպով քաշեցին նրան առաջ, դեպի նրա առաջ կրկին բացված իր տան դռները:

— «Բետտի՛, այդ դու՛ յես, աղջիկս», — ուզում եր ասել միտարիս Ջոնսը, բայց Բետտին բոլորի հետ միասին ձայն եր տալիս «կարելի՛ յե, պարտավո՞ր ես», այնպիսի բարձր և ականջ ծակող ձայնով, վոր իսկույն և եթ հասկանալի յեր, վոր այդ վոչ այլ վոք ե, յեթե վոչ Բետտին:

Մե՛կ, յերկո՛ւ, չախկ—չրրիկ զարկվում էյին կապոցներն ու փաթեթները և ներս նետվում բաց դռնով: Մարդիկ շտապում էյին, նրանք ժամանակ չունեյին: Նրանց էյին սպասում և ուրիշ ձվի արկղներ և այլ փակ դռներ:

Այդ ուր մի բոպեյից, մի ժամից հետո այդ բոլորն ընդմիշտ պիտի վերջացնեյին:

Մարդիկ պիտի վերադառնային իրենց հարկի տակ, ինչ ել չտեսին ամբողջ աշխարհի միտար Բերրոուզները և միտար Պերկինսները:

Յեւ... հանկարծ (և ինչո՞ւ այդ բոլորը պատահում է հանկարծ) հեռու, հեռու արեկոծված ամբոխի աղմուկի և ժխորի միջից լսվեցին հաղիվ լսելի վոտքերի դոփուկներ, դո՛փ, — դո՛փ, — դո՛փ — դո՛փ. դոփում էյին պայտերը: Զիավորներ էյին գալիս: Վոստիկանությունն եր մոտենում:

Վոստիկանություն, վորն ինչպես և ամեն ինչ այդ քաղաքում, պատկանում եր միտար Բերրոուզին և նրա բարեկամներին:

Ինչպես պատահեց այդ ամենը

Դու լավ ես հասկանում, վոր ավագ միտար Պերկինսն ել այդ ժամանակ քնած էր:

Բոքը և Թոմը ձվի արկղը ձեռքերին միտար Բերրոուզի կրպակից դուրս գալուն պես, միտար Պերկինսը վազեց դուռը և լուսամուտները փակելու: Յերկաթյա փեղկերը շառաչյունով վերից վար իջան և ծածկեցին զարդարված ցուցափեղկերի հայելյա ապակիները:

Նույն շաչյունով և շփնդով ցած իջավ նաև յերկաթյա դուռը, ծածկելով իր յետևում պահված դեղին բանանի լեռները, պահածոների տուփերի բուրգերը, սպունգանման պանիրների կույտերը: Իսկ ավագ միտար Պերկինսը մի վոստյունով նետվեց դեպի հեռախոսը:

Դողդոջուն ձեռքերով ականջին սեղմելով հեռախոսի խողովակը, նա ամենից առաջ կանչեց միտար Բերրոուզին, հետո կրտսեր միտար Պերկինսին, ապա վոստիկանապետին և հետն ել ինչ վոր մի ուրիշի:

Յեւ ընչասպառ ու խեղդվելով, բոլորին միանման պատմեց «չլաված անկարգությունների», ապստամբության, ահարկու վտանգների մասին, վորոնք սպառնում էյին նրա դեղին բանաններին, պահածոների տուփերին և սպունգանման պանիրներին:

Ավագ միտար Պերկինսը լսում եր հեռախոսի միջով, թե ինչպես հեռախոսի մյուս ծայրում միտար Բերրոուզը վրդովված կերպով հեվում եր, թե ինչպես վախեցած կերպով ախ եր քաշում կրտսեր միտար Պերկինսը և ինչպես կարեկցաբար հառաչում եր վոստիկանապետը:

— Յեւ նրանք բոլո՞րը, բոլո՞րը դուրս են յեկել փողոց—հեռախոսի միջով վայնասուն եր բարձրացնում ավագ միտար Պերկինսը:

Նրանք վողողել են ամբողջ փողոցը, ամբողջ քաղաքը և նրա ծայրամասերը:

Թեև միայն հարյուրավոր հանքափորներ էյին,

սակայն ավագ միստր Պերկինսին թվում էր, թե նա տեսնում է հարյուր հազարավոր բանվորներ և իբր թե այդ հարյուր հազարավորներն արշավում են իր վրա, դեղին բանանների և ծակծակոտ պանիրների վրա:

Բոլորից առաջ ուշքի յեկավ միստր Բերրոուզը:

— Դուք ասում եք, — թշուշ հեռախոսի խողովակի միջից նրա ձայնը, — վոր Թոմ Ջոնսը բոլորի առաջն էր գտնվում:

Այո՛, Թոմ Ջոնսը: Նա նույնիսկ բռնեցքով խփեց վաճառասեղանին:

— Համբերեցեք, կարեվորն այդ չէ: Ահա թե ինչն է կարեվորը: Այդ Թոմ Ջոնսը նե՞ղր է:

— Նե՞ղր. իսկակա՞ն նեղր. այո՛, ամենախակական նեղր, միստր Բերրոուզ: Յեվ նա չատ հանդուզն նա-յում էր ինձ վրա:

— Սպասեցե՛ք, այդ դարձյալ կարևոր չէ: Կարևոր է այն, վոր նա նեղր է. հետո կարևոր է այն, վոր նա առաջինը մտավ կրպակը: Յեվ յես ջնձ հասկանում, թե ինչպես դուք, ինքներդ չըմբռնեցիք այդ:



— Այն, վոր նա նե՞ղր է:

— Այն, վոր հարկավոր է բոլորին ձայն տալ, վոր նա նեղր է: Վոր նա նեղր է և գլխավորում է նրանց բոլորին: Յեվ հետո... Մի՞թե նա չէր կարող գողանալ: Գողանա՞լ:

Վո՛չ: Միստր Պերկինսը վերջնականապես դադարեց ըմբռնելուց: Նա նույնիսկ «թո՛ւհ» արեց խողովակի միջով: «Թո՛ւհ-հ-հ-հ» կար-

ծես թե հազորդալարի մյուս ծայրում հարգո միստր Բերրոուզի հարգելի ականջը նրան չէր լսում:

Սակայն միստր Բերրոուզը վորոշեց ուշադրու-թյուն չդարձնել այդպիսի դատարկ բաների վրա:

— Դուք լսո՞ւմ եք, — կրկնեց նա, — մի՞թե նա վոչինչ չկարողացավ գողանալ:

— Վո՛չ, միստր Բերրոուզ, նա վոչինչ չգողացավ: Մի՞թե յես կարող եյի թույլ տալ, վոր վորեւիցե մեկը համարձակվեր...

— Հը՞, իսկ յեթե...

միստր Պերկինսը արեց ճակատի քրտին-քը և նայեց չորս կող-մը: Վոչ. բոլորն իր տեղն էր: Նեղր Թոմ Ջոնսը վոչինչ չէր գո-ղացել: Այդ ակնհայտ էր:

Յեվ միայն... մի-այն...

Յեվ միստր Պերկինսն ուրախությունից թուչ-կուեց իր հեռախոսի խողովակի շուրջը բոլո-րովին այնպես, ինչպես կեռ կուլ տված ձուկը:

— Սավաթաթղթե նե՞ղրը: Նա տարել է այդ—բը-ղավեց խողովակի միջով ուղիղ միստր Բերրոուզի ա-կանջի մեջ: Նա գողացավ շոկոլադեի տուփը ձեռքին մեր հրաշալի նեղրին: Միստր Բերրոուզ, նա գողացել է սավաթաթղթե նեղրին, մեր խանութի զարդը և հպար-տությունը:

— Գեղեցի՛կ, — թնդաց նորից հեռախոսի խողովա-կում միստր Բերրոուզի ձայնը: Ել ուրիշ բան հարկավոր չէ: Զանգահարեցեք վոստիկանության, թող նրան ձեռ-բակալեն վորպես խոսվության դրդիչի, գողի և... նեղրի:

Յեվ չանցած մի տասն րոպե, ձիերի սմբակները դուրսում եյին ասֆալտի սալահատակի վրա:

Դո՛ւ, դո՛ւ, չըբխ, չըբխ:



Վաստիկանությունն եր թռչում, վորը, ինչպես
քաղաքում յեղած ամեն բանը, պատկանում եր բերրո-
ւողին և նրա բարեկամներին:

XVI

«Դէհ, բաց, մայրիկ»

— Թո՛ւմ, ձայն տվեց միստրիս Զոնսը, — Թո՛ւմ,
վերադարձիր, յես վախենում եմ:

Բայց Թո՛ւմն արդեն հեռու յեր:

— Նա այժմ վաղեց ուրիշների մոտ, — ասաց Բետտին:
Այսոր բոլորն ել պետք է քնեն իսկական անկողինների
մէջ, իրենց հարկերի տակ: Այդ ինձ ասաց ինքը Դիկը:
Յես քեզ տալիս եմ գլխավոր շօֆերի ողնականիս ազնիւ
խոսքը, վոր դա այդպես ել կլինի, ասաց Դիկը: Իսկ
միստր Պերկինսը կարող է իր համար չինել տալ ման-



յակ՝ կորած կողպեքներէց և բանալիներէց, յեթե այդ-
նրան դուր կգա: Այո՛. և այդ մանյակը վզին կգնա հենց
իսկական միստր Բերրոուզի մոտ սուրճ խմելու: Այդ-
եւ ասաց Դիկը, միայն յես չգիտեմ, թե միստր Պեր-
կինսի ինչի՞ն է պետք այդպիսի ծանր մանյակը: Իսկ
դու գիտե՞ս, մայրիկ:

— Յես վոչինչ չգիտեմ, — պատասխանեց մայրը,
չհեռանալով լուսամուտից: Յես վախենում եմ միայն
Թոմի համար և նրանց համար, այն ուրիշ տղերքանց
համար: Լսի՛ր, մի՞թե դու չես լսում, վոր ինչ վոր
մեկը ձիով գալիս է: Լսու՞մ ես, լսու՞մ ես:

— Դո՛ւ, մայրիկ, միշտ վախենում ես մի բանից,
— պոռթկաց Բետտին և քաշեց մոր փեշից: Ավելի լավ
է, մայրի՛կ, նայիր այս կողմը, տե՛ս, յես այս բերել
եմ քեզ և յերեխայի համար: Ճիշտ ասա, գեղեցիկ չե՞:

Միստրիս Զոնսը յետ նայեց և հանկարծ յետ յետ
դնաց:

— Այդ ի՞նչ բան է, — փնթփնթաց նա: Յեվ քեզ ո՞վ
տվեց այդ: Պատին կպցրած սեղանի վրա կանգնած եր
կարմիր, դեղին և կանաչ գույնի սովորաթղթե նեզրը:
Այն նույն սովորաթղթե նեզրը, վորը բոլորին ծա-
նոթ եր, և վորը միստր Բերրոուզի վաճառատան
դարդն եր:

— Յես այդ գտա փողոցում, — պատասխանեց
Բետտին: Նա ընկած եր փողոցում, առվակի մոտ: Յեվ
քիչ եր մնացել վոր Դիկը վոտքը դներ վրան. յես ամի-
սոսացի և իսկույն վերցրի: Ահա՛ բոլոր պատմու-
թյունը:

— Բայց նա վո՞նց ընկավ փողոց, — շարունակեց
հարց ու փորձ անել Բետտի մայրը: Յես չե՞ վոր ճա-
նաչում եմ. այդ միստր Բերրոուզի կրպակի նկարն է:
Այդ եր պակաս, վոր ասեն թե դու յես գողացել:

Բետտին բարկացկոտ փնչաց և ձեռքը թափ տվեց:

— Դու դարձյալ, մայրի՛կ, հիմարություններ ես
ասում. ինչպես կարելի յես ասել, վոր յես եմ գողացել,
յերբ յես չեմ գողացել: Այո՛, մայրի՛կ, ինչքան լավիկն
է: Յեվ գիտե՞ս իսկական մեր Թոմի նման է: Ափսո՛ս,

վոր մեր թոմը յերբեք չի ունենում այդպիսի գլխարկ
և այդպիսի մեծ շոկոլադ:

Բայց միտարիս Ձոնսն այլևս չէր լսում Բեատին
և կրկին կանգնած էր լուսամուտի առաջ:

Չախկ-չրբխկ, չրբխկչրբխկում էյին ձիերի սըմ-
բախները սալահատակին:

Չախկ — չրբխկ, խփում էր արյունը միտարիս
Ձոնսի կնքերակներում, և հանկարծ... (ա՛խ այդ
«հանկարծը»), բայց մի՞թե յես մեղավոր եմ վոր այդ
սլառահում ե հանկարծ, յեթե անգամ դու սպասում
ես դրան):

Յեվ հանկարծ չախկ ու չրբխկը բոլորովին մոտե-



ցավ, հենց սլառաչգամբի, հենց նրա սանդուխքների աս-
տիճաններին ու դռան մոտ:

Չրբ՛խկ, չրբ՛խկ: Յեվ մեկը հրամայեց բանալ
դուռը:

— Բա՛ց, մալրի՛կ, ասաց Բեատին: Ձե՞ս լսո՜ւմ,
վոր մեկն ուզում ե ներս գալ:

— Յես վախենում եմ, Բեատի,— ահանջին փրս-
փրսալով ասաց մայրը չլարժվելով տեղից:

— Բա՛ց, մալրիկ, կրկնեց Բեատին և գնաց դեպի
դուռը:

«Սպասիր» — նրան ուզեց ձայն տալ մայրը. —
«Սպասիր, հարկավոր չե»: Բայց չգիտեմ ինչու լեզուն
չհնազանդվեց նրան:

Բայց նա կարողացավ յերկարացնել ձեռքը և վերց-
նել ստվարաթղթե նեղրին, ծիծաղող, ուրախ նեղ-
րին, դեղին գլխարկով և շոկոլադի մի այնպիսի մեծ
տուփով, վորպիսին նրա յերեխաները յերազում ան-
գամ չէյին տեսել: Կարողացավ դեռ վերցնել այն,
բայց թաղցնել այլևս չհաջողվեց նրան:

Բեատին յետ տարավ դռան փակը, դուռը չրխկա-
լով բացվեց և սենյակի մտան մարդիկ:

XVII

«Մեզ հարկավոր ե կենդանի նեղր»

— Ձեր անո՞ւնը:

— Ինձ կոչում են Ձոնս: Սալլի Ձոնս, թանգագին
պարոններ:

— Այդ ձե՞զ են այս սենյակից դուրս հանել տան
վճարը չտալու համար:

— Այո, ինձ են դուրս հանել, թանգագին պարոն-
ներ: Միանգամայն ճիշտ ե այդ, — ինձ և իմ աղջկանս՝
Բեատին, իմ փոքրիկ յերեխային և իմ վորդի թո-
մին: Բայց տեսնում եք, թանգագին, թանգագին և
բարի պարոններ...

— Իսկ ինչո՞ւ դուք նորից այստեղ եք գտնվում:

Ո՞վ ձեզ թույլատրեց նորից դբադեցնել այս սենյակը:
— Թանգազին պարոններ, արդեն որը մթնել եր
և գիշերը շատ, չա՛տ ցուրտ պիտի լինեն: Փոքրիկ յե-
րեսայիս ձեռքերն ու վոտքերը մըսել էյին, յես վա-
խենում էյի, վոր նա կմըսեր. տեսնում եք, նա հա-
ճախ հիվանդանում ե և վերջին ժամանակներս...

— Սալլի Զոնս, պատասխանեցեք միայն մեր հար-
ցերին: Մեզ բոլորովին չեն հետաքրքրում վոչ ձեր
նկատառումները, վոչ էլ ձեր յերեսայի առողջությու-
նը: Դուք ի՞նչպես նորից ընկաք այս սենյակը, յերբ
նրա դուռը փակված եր և բանալին գտնվում եր պատ-
վարժան միտար Պերկինսի մոտ:

— Ո՛հ, Թանգազին պարոններ... Յես... չգի-
տեմ... յես չգիտեմ ինչպես պատահեց այդ:

— Վոչ, դուք այդ գիտեք, քավթառ, կեղտոտ
նեզրուհի, այդ շատ լավ գիտեք: Այդ ձեր վորդի,
այս զազրելի ասպտամբությունը սարքող հանքափոր
Թոմ Զոնսն ե ձեզ նորից բերել այս տունը: Այդ նա
յե դրդել իր ընկերներին դուրս գալ միտար Բերրոու-



դի դեմ: Այդ նա յե, վոր գողացել ե միտար Բերրոուզի
կրպակից նրա գեղարվեստորեն կեղտված ստվարա-
թղթե նեզրը, կրպակի չքեղ զարդարանքը, վոր բրիս-
տոլյան ամենալավ ստվարաթղթի վրա յոթ գույներով
նկարված ե:

— Թո՞մը: Դուք ասում եք, վոր այդ իմ Թո՞մն ե
արել:

— Ձեզ հիմարի տեղ միք դնի, Սալլի Զոնս: Դուք
շատ լավ եք հասկանում, թե մենք ինչ ենք ասում,
չե՞: Տեսնո՞ւմ եք, դուք անգամ չեք կարողացել վո-
չընչացնել նրա հանցագործության հետքերը: Այդ ինչ
ե ձեր ձեռքում: Բարձրացրե՛ք ձեր գողնոցը, շուտ, ես
բոպեյին: Ահա՛... ահա՛... ի՞նչ կարող եք դեռ ասել,
ի՞նչ:

— Բայց այդ Թոմը չի բերել, բարի պարոններ:
Այդ իմ աղջիկ Բեստին ե գտել փողոցում՝ առվակի
մոտ: Վերցրեք, յեթե ձեզ այդ հարկավոր ե: Հիմար
աղջիկ ե, իհարկե, չպետք ե վերցնեն: Բայց ի՞նչ ա-
նենք, յերբ նա յերբեք չի տեսել այդպիսի գեղեցիկ և
զարդարված նեզրեր: Վերցրե՛ք այդ: Վերցրե՛ք,
բարի պարոններ:

— Վոչ, Սալլի Զոնս, մենք չենք վերցնի ստվարա-
զարդ նեզրը: Մեզ հարկավոր ե կենդանի նեզր և մենք
կստանանք: Կի՛ն, վորտեղ ե ձեր վորդին:

— Վո՛չ, Վո՛չ, յես չգիտեմ վորտեղ ե Թոմը: Ինձ
այդ մասին մի՛ք հարցնի: Յես ասում եմ ձեզ, վոր յես
չգիտեմ վորտեղ ե իմ տղան: Յես վոչինչ չգիտեմ: Յես
պառավ և աղքատ նեզրուհի յեմ:

— Դուք չգիտե՛ք. լավ, մենք ինքներս կգտնենք
նրան: Մենք ինքներս կգտնենք նրան. միայն թե հետո
ավելի բարձր չլաք նրա համար: Ջտեսություն միա-
տրրիս Զոնս: Մնաք բարով:

Յեվ դուռը նորից ճռռաց:

Մարդիկ գնացին:

Այնտեղ, ամայի վայրում

Բայց Բեատին, ինչպես ինքդ հասկանում ես, չէր սպասում վոչ խոսակցության վերջին, վոչ անկոչ հյուրերի գնալուն:

Լավ եր, վոր դուռը այնքան ել ամուր չէր խփած: Յեվ լավ եր, վոր Բեատին այնքան բարակ և ժիր եր... Հը՛, տեսնում ես, յես դժվարանում եմ միանգամից գտնել իսկական համեմատությունը: Հը՛, դուցե փոքրիկ վոսկե ձկնիկի նման, յերբ նա պտույտ ե տալիս, յերեվում և անհետանում ջրով լիքը ամանում, սոթ ե տալիս քո մատների արանքից և իր ուժեղ ու ճկուն պոչով խփում քո ձեռքերին:

Այդպես ել Բեատին ծղվեց կիսախուսի դռան արանքից և դուռն անգամ չճռուաց, չչարժվեց ու չչլջեց նույնիսկ իր ծխնինների վրա:

Փողոցում արդեն մութն եր: Վառվում եյին լապտերները և փողոցի հետ միասին նրանք փախչում եյին դեպի ներքեվ, ցանցառ լույսերն ու սև ստվերները:

Փողոցը վազում եր ներքեվ, հետո այն ծովեց դեպի աջ, հետո նորից ցած իջավ, բայց այս անգամ դեպի ձախ և հանկարծ միանգամից կտրվեց ամայի տարածության մոտ, ուր ձվի արկղների և յուղի տակառների մեջ ահա մի քանի որ ե ինչ ապրում եյին վոսկե սրտի տեր միտար Պերկինսի կողմից տներից դուրս արված մարդիկը:

Այստեղ արդեն վերջանում եր միտար Բերրոուզին պատկանող քաղաքը: Վերջանում եյին նրա փողոցները, լապտերները և տների շարքերը: Յեվ այդ շարքերից այն կողմը սկսվում եր մեծ, խավար և ամայի վայրը, վորի միջով անցնում եր դեպի հանքահորերը տանող ճանապարհը: Աղբի կույտեր, մոլախոտի փշապղնձեր, ջարդված ապակիներ, վորոնք փայլելում եյին վոտքի

տակ, ապա սեղանների, մահճակալների, աթոռների կտորտանքներ, և իրար վատ հագցրած տախտակներից պատեր, և ծակոտիներով լիքը վերմակներից պատրաստած կտուրներ, և գիշեր ժամանակ դուրս շարված՝ հին, կարկառված հագուստից դռներ:

Յեվ այդ ժամին այստեղ եր վազում Բեատին: Նա գիտեր վորտեղ ե թոմը, վորտեղ Դիկը, վորտեղ ե Բոր Գրիգորին, վորտեղ են բոլոր մնացած հանքափորները:

XIX

Սպիտակի յեվ սեվի մասին

Մի ջենտլմեն, հենվելով վոստիկանի ուսին, և տնքալով, բարձրացավ դատարկ տակառի վրա:

— Իմ բարեկամներ, — ասաց նա աչքի տակից անցկացնելով նոթերը կիտած լուռ հանքափորներին:

— Իմ բարեկամներ, միք մոռանա, վոր մենք սպիտակամորթ մարդիկ ենք: Մենք սպիտակամորթներ ենք և չենք կարող թույլ տալ կեղտոտ խափշիկին, վոր մեզ գրգռի հանցագործութուններ կատարելու: Մենք սպիտակամորթ մարդիկ ենք...



— Սպիտակ շապիկներ, — ինչ վոր մեկը մըրթ-
մըրթաց յետեւից և ծիծաղը բռնեց ամբոխին:

Յեւ իսկապես ջենտլմենը հագած էր սպիտակ,
շա՛տ սպիտակ շապիկ: Յեւ ջնայած, վոր այդ սպի-
տակ շապիկի վրայից հագած էր ճմլված բաճկոնիկ,
իսկ պարանոցին ոճապտույտ ձևով փաթաթված էր
հնամաշ և յուզոտված վզկապը, բայց շապիկի թևերը
փայլում էին այնպիսի սպիտակութամբ, վոր յերբե-
մըն միայն պատահում է շաքարի գլխի թարմ ջարդած
կտորի մեջ:

— Տեսնո՞ւմ ես, ինչպիսի թեւակոճակներ ունի, —
նորից մըրթմըրթաց մեկը ամբոխից: Այդպիսի մի կոճակի
գնով մենք կարող էինք մեր ընտանիքով մի ամսից
ավելի ապրել: Դա բանվոր չէ, այլ բանվորի շորեր
հագած մի պարոն: Յեւ մենք կարիք չունենք լսելու
ներան:

Այսպիսի խոսակցություններ էին տեղի ունենում
ամբոխի մեջ, վորը չըջապատել էր տակառի վրա
բարձրացած ջենտլմենին:

Իսկ ամբոխի մեջ, նրա՝ մեջտեղում, կանգնած էր
Բետտին և ամուր բռնել էր իր չեկ Դիկի ձեռքը:

Վորքան լավ յեղավ, վոր նա այն ժամանակ
այդքան շտապ կերպով դուրս սողաց դռան արանքից:

Վորքան լավ յեղավ, վոր նա այնքան արագ — ա-
րագ վազեց մութ փողոցով դեպի ամայի վայրը, դեպի
այդ մարդիկը:

Յեւ ինչքան լավ է, վոր այժմ նրա կողքին կանգ-
նած է չեկ Դիկը՝ գլխավոր շփերի կրտսեր ոգնա-
կանը:

Շեկ Դիկը և վոչ թե Բետտին հարազատ յեղբայր՝
սեւամորթ Թոմը: Իսկ սպիտակ շապկավոր ջենտլմե-
նը կեղտոտ բաճկոնը հագին ծեծում էր իր կուրծքը և
վոսկե թեւակոճակը, ամեն անգամ թեւ թափ տալիս,

փայլիլում էր նրա յերեսին, ինչպես մի փոքրիկ,
ձեռքի արեգակ:

— Վո՛չ, — գոչեց ջենտլմենը: — Այդ սեւ նեղրին,
այդ խոռովություն սարքողին, այդ գրգռողին, այդ
գողին մի՞թե դեռ ևս պիտի պահենք մեր մեջ: Բա՛նտ,
բանտ նետել նրան առանց ուշացնելու:

— Բռա՛վո, բռա՛վո — ծափահարեցին վոստիկան-
ները սպիտակ շապկավոր ջենտլմենին, և նրանցից մե-
կը նորից նրան դեմ արեց իր ուսը, վորպեսզի ջենտլ-
մենին հարմար լինի իջնելու տակառի վրայից, յերբ
նա վերջացներ իր ճառը:

— Դուք լսո՞ւմ եք, հը՞, — նրա բերանից խոսքն
առավ մի այլ վոստիկան: — Գործը հարթված է: Դուք
ցրվեք ձեր տները, իսկ մենք նեղրին կտանենք մեղ-
մոտ: Ձեզ ել, անշուշտ, դուրեկան չե, վոր դուք թույլ
եք տվել սեւամորթին գլխավորել ձեզ: Համենայն դե-
պքս, սպիտակամորթները — սպիտակամորթներ են,
իսկ սեւամորթները մնում են սեւամորթներ: Յես չեյի
դարմանա, յեթե դուք նրան մի քիչ քարշ տայիք վեր,
վորպեսզի նա չխառնվեր իրեն չպատկանած գործին...

Ամբոխը լուռ էր: Բետտին նայեց չորս կողմը, իր
շուրջը տեսավ միայն կիտված հոնքեր ու սեղմված
չըթոնքներ:

— Դի՛կ, ինչո՞ւ յեն նրանք լուռ, — դողդողալով
հարցրեց Բետտին, քաշելով չեկ Դիկի թևը: — Ինչո՞ւ
նրանք չեն առում, վոր այդ ճիշտ չէ: Սրանք իսկապես
կհանձնե՞ն Թոմին...

— Լռի՛ր, Բետտի, — չշուկով պատասխանեց նրան
Դիկը: — Յես վոչինչ չգիտեմ: Նրանց այդքան անգամ
ասել են, վոր նեղրերը միայն նեղրեր են, վոր նը-
բանք իրոք գուցե հիշեն այդ: Բայց տեսնում ես, Բե-
տ-

տի, յես աշնուամենայնիվ կարծում եմ...

Սակայն Բետտինն չհաջողվեց լսել, թե իսկապես ինչ եր կարծում այդ մասին Դիլը:

Վոստիկանը նշան արեց, և ձիերը, վորոնց վրա նստած էին մյուս վոստիկանները, մի քիչ առաջ շարժվեցին:

Չը՛խկ, չը՛խկ, թեթեւ կերպով դուրեցին ձիերի ամբակները:

Մի մասը դեպի աջ, մյուսը — ձախ, իսկ յերրորդը խիտ, սպառնալի կերպով, պատի նման չըջապատեցին ամբոխին:

Այդ ժամանակ ամբոխից մեկը շվվացրեց և մեկն ել ձայն տվեց:

Յեվ մեկի ձեռքով ճարպիկորեն նստած քարը խույ՝ ձայնով դիպավ դատարկ տակառին, վորտեղ սպիտակ չապկով և կեղտոտ բաձկոնով ջենտլմենը դեռևս թափահարում եր ձեռքերը և ճոճում գլուխը:

— Սրանք չե՛ն հանձնի, սրանք չե՛ն հանձնի, — հրճվանքով ուղիղ Բետտիի ականջին բղավեց չեկ Դիլը: Սրանք չեն տա: Բայց քեզ համար լավ կլինի հեռու գնալ ամբոխից: Նայի՛ր, այստեղից արդեն կատակի հոտ չի գալիս:

Յեվ թեվերը վեր քաշելով, Դիլը կռացավ դեպի գետին, վորովհետև նրան ել քար եր հարկավոր:

XX

Նորից հեռախոսով

— Վո՞րտեղ են պահել նրան, սատանա՞ն տանի:

— Դժբախտաբար մեզ չհաջողվեց խուզարկել ըստ ըստ տարածութունը: Չնայած վոր մենք ձիերի վրա եյինք, բայց և այնպես նրանք թույլ չտվին մեզ անցնելու: Համարձակվում եմ զեկուցել ձեզ միտոր Բերրոուզ, վոր քարն ել այնքան հաճելի բան չէ, առանձ-



նապես այն ժամանակ, յերբ նրանք շատ են և ուղղակի նետվում են ձեզ վրա:

— Բայց դուք նրանց ասացի՞ք, վոր նա նեղր ե, վոր նա սևամորթ ե, վոր նրանք իրենց խայտառակում են, յերբ կա-

պում են այդ դարչելի կենդանու հետ:

— Պերկինսի քեռորդու կոկորդը չորացավ, ձայնը խռպոտ դարձավ ապացուցելով այդ, սակայն միտոր Բերրոուզ, յես վախենում եմ...

— Ինչի՞ց եք վախենում, սատանան տանի ձեզ այդ նեղրի հետ միասին:

— Բայց յես վախենում եմ, վոր այլևս այդ չի ունենա այնպիսի հաջողութուն, ինչպիսին առաջ եր...

— Ի-ի՞նչ:

— Յեվ վախենում եմ, վոր յերբ մարդիկ գիշեր — ցերեկ աշխատում են կողք-կողքի, նրանք այլևս չեն մտածում այն մասին, թե ինչ գոյնի յեր իր հարեւանի կաշին: Յեվ բացի դրանից...

Հը՞, հետո՞...

— Յեվ բացի դրանից...

— Դե՛հ, ել մի ծամծամեք պառավ կնոջ նման...

— Յեվ բացի դրանից նրանք բոլորն այնպես սեղմ մեջք-մեջքի յեն տալիս, վոր յեթե խփես նեղրին, անպատճառ կարող ես դիպել սպիտակամորթին:

— Հավատացե՛ք, թանգազին միտոր Բերրոուզ, վոր յես



ինքս ձեզանից ավելի քիչ չեմ վշտացած, բայց... բայց...

Սակայն վոստիկանապետին չհաջողվեց վերջացնել վերջին խոսքը:

Հեռախոսի խողովակում ինչ վոր բան վզվզաց և թշխալաց և ինչ վոր մեկի աքլորային ձայնը խրխուաց, բարկությունից խեղդվելով:

Հարկավոր է վոչ թե վշտանալ, այլ կրակել, կրակել և կրակել: Դուք փող եք ստանում վոչ թե վշտանալու համար, այլ գնդակների համար: Յեվ ձեզ հարկավոր չե գատողություններ անել, թե ուր կընկնեն նրանք, կամ ում կգլխեն...

«Ու-ու-ու-մ-», դուրս յեկավ բոլորովին բարակ և ծիծաղելի: «Այդ նույնիսկ աքաղաղ չե, այլ ուղղակի հավ,— մտածեց ինքն իրեն վոստիկանապետը:— Վորքան տարրինակ է, վոր յես առաջ այդ չեյի նկատել միստր Բերրոուզի մոտ»:

Բայց դու հասկանում ես, վոր այդ նա միայն մտքից անցկացրեց: Իսկ բարձր ձայնով նա ասաց՝

— Լա՛վ, լսում եմ, միստր Բերրոուզ:

Յեվ ձեռքը դրեց գլխարկի հովարին, թեև այդ արդեն վոչ վոք չտեսավ:

XXI

Յեվ վերջ

Դե՛հ, այժմ ժամանակ է վերջացնելու:

Ուղիղն ասած յես կցանկանայի այս պատմությունը բոլորովին այլ կերպ վերջացնել:

Յես ուրախությամբ կպատմեյի քեզ այն ուրախ, պարզ ու ջինջ արևոտ առավոտվա մասին, վոր յեկավ փոխարինելու այդ գիշերվան, վորը անցավ արկածներով, քարերով և հեռախոսային խոսակցություններով:

Յեվ ձեզ կտանեյի նորից Բետտիի մոտ՝ միստրիս Ջոնսի սենյակը, ուր մաքուր լվացված լուսամուտներից կախված կլինեյին թարմ ոսլայած վարագույրները, իսկ

լուսամուտների ներքնատախտակների վերա կանաչած կլինեյին հինածաղիկը: Կլոր սեղանի վրա, դարնան մարգագետնի պես փռված կլինեյին սիրողը՝ ծաղիկներով: Մաքուր սրբված կողերով թեյա-



մանի, ճոճուացող թխվածքով լիքը ավաեյի, թարմ յուղի կտորը մեջը դրած յուղամանի շուրջն առավոտյան թեյի նստած կլինեյին և՛ միստրիս Ջոնսը, և՛ Բետտին, և՛ Թոմը, նույնիսկ փոքրիկ յերեխան՝ մեծ յեղբոր գոգը նստած:

Յեվ սեղանի մոտ, արեգակից տաքացրած հատակին, կերին սպասելով ննջելիս կլինեյին և՛ կատուն՝ Կվինը և՛ շունը, վորոնց մասին, ի դեպ ասած, յես վոչինչ չպատմեցի քեզ: Յես չառ եմ ավաստում, վոր չեմ կարողանում իմ պատմությունը վերջացնել ճիշտ այդպես:

Բայց միստրիս Ջոնսի համար, Թոմի համար, Բետտիի համար, դարչնագույն յերեխայի հետ միասին դեռ ևս չի յեկել ժամանակն՝ այդպիսի մի առավոտվա ուրախությունը վայելելու:

Այն փողոցում, վոր պատկանում է միստր Բերրոուզին, այն քաղաքում, վոր տասնյակ միստր Բերրոուզների յե պատկանում, այդ պատմություններն այդքան հասարակ կերպով չեն վերջանում:

Դուք ևս այս անգամ Թոմին հաջողվի խուսափել բանտից, — վորովհետև նրան լավ է թաքցրել չեկ Դիկը, — իսկ նրա մյուս ընկերները, բարեբախտաբար, ունեցան առողջ բուռնքներ, բայց յես չգիտեմ թե վաղը, մյուս օրը, մի այլ ժամանակ ինչ կարող և պատահել Թոմին:

Այս պատճառով յե՛կ չմտածենք մաքրած թեյամանների, թարմ ոսլայած վարագույրների և թեյի սեղանի շուրջն յեղած ուրախ առավոտների մասին:

845
Յե՛վ Թումը, և՛ նրա ընկերներն իրենց կյանքի ըն-
թացքում դեռ ևս չատ պետք է պայքարեն:

Բայց այժմ յեսմտածում եմ ճիշտ վոստիկանապետի
նման, այն է՝ յեթե մարդիկ մոռ- կերպով կողք-կողքի
յեն տալիս և իրար պաշտպանում, այն ժամանակ չես
տարբերի վոչ սեամորթին և վոչ ել սպիտակամորթին:

Բոլորն ինչպես մեկ մարդ, և բոլորը միասին և
յեթե խիստ մեկին, քեզ կպատասխանեն արդեն հազա-
րավորներ:

Յերևում է, վոր վոստիկանապետներն ել յերբեմն
դիտեն ճշմարտություն ասել:



Խմբագիր՝ Սն. Սնաբյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբադրիչ՝ Ա. Արզախանյան

Հրատ. 3975, Գլ. լիազոր Կ—4606, Պատվ. 70, Տիրաժ 3000
Թուղթ. 62×94. Տպագրական 3³/₄ մ. մեկ տպագրական
մամուլում 26880 նիշ. հեղինակային 2¹/₂ մամուլ
Հանձնված է արտադր. 7 հունվարի, 1937 թ.
Ատորադրված է տպելու 4 հուլիսի, 1937 թ.

Պետհրատի տպարան, Յերևան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0383866

10 ч.

4679

А. ЧУМАЧЕНКО
КАРТОННЫЙ НЕГР
Гиз СССР ЕРЕВАН